

զամ ընդ նոսա ծիծաղէր: Ապա ճշմարտիւ ըստ ասից հոգեկիր հոկտորին՝ էր բարձր եւ խոնարհ, որ է կատարեալ չափ մեծութեան, որով նմանին մարդիկ Աստուծոյ:

ՈՂՈՔ ՅԱԽՏԻՆ ԳԱՂԹԷՐ ՊԱՇՏՕՆ:

Այսինքն ի շողոքորթական աստին պաշտօն տանելոյ կամ պաշտամանէ՝ գաղթէր, այսինքն փախչէր: Իբր թէ ասի. փախնոյր ի ծառայելոյ շողոքորթութեան կամ ի շողոքորթութենէ: Վասն որոյ բնաւ չտեսաւ ի կեանս իւր շողոքորթել զոք, այլ յամենայն դործս եւ ի բանս իւր սիրէր զպարզութիւն եւ զուղղամտութիւն. վասն որոյ ի դիպելն շողոքորթաց՝ խոյս տայր կամ զգէմս իւր դարձուցանէր եւ կամ խոժոռաղէմ նայէր:

ՅԱՍՊԻՍՆ ՀԱՅՈՑ ԱՐԺԱՆՆ Ի ՏՕՆ:

Այսինքն Մխիթար արքայն, որ էր Հայոց ազգին իբրեւ զակն յասպիս ի վարդ եւ ի յօգտակարութիւն, արժանաւորն մեծահանգէս տօնեալ լինելոյ:

ՆՈՒԱԳ ՈՍԿԻ ԸՆԾԱՅ Ի ՁՕՆ:

Նուագ ոսկի, այսինքն բաժակ ոսկեղէն. ընծայ ի ձօն, այսինքն ընծայեալ ի պարզեւս: Եւ այս տուն միակցորդ ընդ վերին տանն՝ է իբրեւ անուն բայր երրորդ տանն սկսելոյ, ողոք յախտին: Որոց միաւորութիւնն ձեւանայ այսպէս. յողոքիչ աստէն շողոքորթութեան փախչէր Հայոց ազգին գոհարն եւ արամեան տոհմին ոսկի բաժակն՝ Մխիթար արքայն, եղեալն ի դիր հանգըստեան այսր դամբարանին՝ վերտառեալ վիճաւ կափուցելոյ:

Արդ ի վախճանի զա՛յս ծանիր, զի վերտառութիւնս այս, այսինքն հոկտորական գովեստս մակազրեալ ի վիճի, բազկանայ ի յերեսուն եւ մի սողից. որոց սկզբնատառքն վերուստ ի վայր հեղեն անվթար զայս բան.

ՔՆԱՐ ՔԱՂՅՐԱԽՕՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ

որ է ի դէպ մեծի հօր մերում Մխիթարայ արքային, որպէս ի Մեկնութենէ առաջին սողիցն ի վերոյ եղեալ ոտանաւորացն քաջայայտ երեւի:

Մեկնեալ՝

Ի ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԷ  
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԳԱՊԵՏԷ

ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ

ՀԻՄՆԵԳԻՐ ԵՒ ԵՐԵՆՃԱՅՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԵՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԵՆ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

ԱՂԲԻՐՆԵՐ

ա. Մխիթար Սերաստացւոյ վարքը առաջին անգամ գրի առած է Հ. Մատթէոս Վ. Գարաղաշեան Եւդոկիացի (ծնած 2 մարտ 1689, քահանայացած 1714, վախճանած 6 նոյեմբեր 1772), մասամբ ականջալուր եւ մասամբ ականատես Մխիթարի վարքին եւ գործունէութեան փուլերուն: Ան եղած է Մխիթարի քարտուղարը, խորհրդականն եւ խոստովանահայրը. ինքնին աղբարրակեաց եւ խստակրօն: Այս վարքիս օրինակ մը կայ վեհափոխ Մխիթարեան Դիւանին մէջ, տակաւին անտիպ:

բ. Հ. Մատթէոս ունի նաեւ ժամանակագրութիւն մը 50 տարիներու (1700—1750), ուր տուած է ժամանակագրորէն Մխիթարեան Մխարանութեան Պատմութիւնը սկսեալ հիմնարկութեան առաջին տարիէն, նկատի առնելով նաեւ այս շրջանի Հայոց եկեղեցական անցուդարձերը: Այս շատ կարեւոր ժամանակագրութիւնը կը պահուի վեհափոխ Մխիթարեան Դիւանը իր սկզբնադրին մէջ, տակաւին անտիպ: Տպագրութեամբ ծանօթ է նոյն հեղինակի՝ Հ. Մատթէոս Վ. ի Եւդոկիացւոյ Ներբողեանն ի Լուսանոբոզն Մխիթար, վեհափոխ 1926:

գ. Համառոտութիւն վարուց Մխիթարայ մեծի արքայի: Գրուածքիս հեղինակը ծանօթ է, բայց ըմբռն է Մխիթարի աշակերտներէն մէկը, որ կազմած է Համառոտութիւնս աչքի առաջ ունենալով Հ. Մատթէոսի վարքն եւ ժամանակագրութիւնը, ինչպէս նաեւ այլ վաւերագրիւններ, որոնք հաւանօրէն անմատչելի մնացած են վարքի հեղինակին: Այս Համառոտութենէն ունինք երկու օրինակ, մին վիեննայի Մխիթարեան Դիւանին եւ միւսը Մատենադարանին մէջ: Այս կրկին օրինակներէ առաջին անգամ հրատարակեց վարքս Հ. Վ. Խնգլիզեան (տես աստ, էջ 321 եւ շար.): Գրուածքիս մէջ «Կենսագիր» ըսելով կ'ակնարկեմ այս վարքը:

դ. Դիւանական վաւերագրիւններ, վկայականներ եւ թուղթեր, որոնք կը պահուին վեհափոխ Մխիթարեան Դիւանին եւ Հոռմի Ս. Ժողովի Դիւանին մէջ: Մխիթարեան Դիւանէն 190 վաւերագրիւններ 1695—1768 շրջանէն հրատարակուած են Schiarimenti e Documenti (էջ 1—352) անթուական եւ թերի մնացած հաւաքածոյին մէջ, հայերէն բնագրիւնները նաեւ խտալերէն թարգմանութեամբ: Ուրիշ շարք մը վաւերագրիւններ (մասամբ քաղուածաբար) թուով 315 տուաւ Հ. Ղեւոնդ Տայեան, Մայր Դիւան Մխիթարեանց վեհափոխ կոյ ի Ս. Ղազար 1707—1773. վեհափոխ 1930:

Է. Կարգ մը վկայագիրներ, վճիռներ և թուղթեր ընծայած է նաև  
Հ. Յ. Թորոսեան, Վարք Մխիթարայ, էջ 359—386:

Գ. Հ. Մ. Անանեան, Մեկնութիւն տապանագրին Մխիթար արքայի. զոր  
հրատարակեց Հ. Պ. Տէր-Պօղոսեան, աստ, էջ 363—370:

Է. Sacra Rituum Congregatione... Card. Dominico Ferrata, Relatore:  
Sebasten Armenorum seu Venetiarum beatificationis et canonisationis servi  
Dei Abbatis Mechithar... positio. Romae 1906, p. 1—112 + Summarium,  
p. 1—200.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ա. Գերապ. Ստեփանոս Գ. Ազոնց, արքեպիսկոպոս և արքայ, Պատմու-  
թիւն կենաց և վարուց տեանն Մխիթարայ Սերաստացւոյ բարունապետի և  
արքայի. Վենետիկ 1810:

Բ. Հ. Յովհաննէս Թորոսեան, Վարք Մխիթարայ արքայի Սերաստաց-  
ւոյ. Վենետիկ 1901. Բ. տպ. անդ, 1932: Այս վերջինս նկատի առած և՛  
գրուածքիս մէջ:

Գ. P. Minas Nurikhan, Il servo di Dio abate Mechitar, fondatore dei  
PP. Mechitaristi di Venezia, di Vienna, sua vita e suoi tempi. Roma-Venezia 1914.

Դ. F. Minas Nurikhan, The Life and Times of the Servant of God Ab-  
bot Mechitar, Founder of the Armenian Mechitarist Fathers. Translated from  
the Italian by John Mc Quillan. Venice 1915.

Ե. P. Vahan Inglisian, Der Diener Gottes Mechithar von Sebaste, Stifter  
der Mechitharisten und Kulturapostel des armenischen Volkes. Wien 1929.

Գ. Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ. (1784), էջ 727—738, յատ-  
կապէս էջ 762—768 (գլ. ԽԵ, Յաղագս Մխիթարայ Վ. Սերաստացւոյ մեծի  
արքայի):

Է. Աղեքսանդր Երիցեանց, Վենետիկի Մխիթարեանք. Թիֆլիզ 1883:

Բ. Լէօ, Հայկական տպագրութիւն. հատոր Բ. Թիֆլիս 1902, էջ 9—104,  
164—221: Նոյն՝ Հայոց Պատմութիւն, Գ., Երևան 1946, էջ 979—1020:

Գ. Հ. Բ. Սարգսեան, Մխիթարեան Մխարանութիւն. 200ամեայ գրական  
զործունէութիւնն և նշանաւոր գործերը. Վենետիկ 1905:

Նպատակէս դուրս կը համարեմ մի առ մի յիշել այն ամէն գրուածքները,  
որոնք նուիրուած են Մխիթարի և իր Մխարանութեան:

Ա. ՄԽԻԹԱՐԻ ԿԵԱՆՔԸ

1. ՄԽԻԹԱՐԻ ԾՆՈՒՆԴՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Սերաստիա, Հողղար թաղին մէջ, ցոյց կու տան Սերաստացիք մինչև  
այսօր պարճանքով այն տունը, որ ծննդավայրն եղած էր իրենց մեծ քաղա-  
քացւոյն, Մխիթարի: Ան աշխարհի լոյսը ողջունած էր 1676 փետրուար 7ին<sup>1</sup>:  
Պետրոսի հայրն Պետրոս կը կոչուէր իր հայրը, և Շահբախան իր մայրը: Պետրոսի հայրն  
էր Մանուկ և պապը՝ Մխիթար: Երեք եղբայրներ կը բնակէին մէկ յարկի  
տակ. առաջին արու դաւակն էր որ կը ծնանէր հոն, որուն յաւազանէ Մանուկ  
անունը կը արուի: Յայտնի է, թէ ունէ՞ր գերդաստանն իր տոհմական մա-  
կանունը: Մանուկ, որ յետոյ Մխիթար կոչուեցաւ իր մեծ պապին անունով,  
Պետրոսեան մականունով ծանօթ է: Մխիթար ունէր եղբայր մը՝ Յովսէփ  
անուն, և քոյր մը՝ Սիմա<sup>2</sup>: Բարեպաշտ, աստուածավախ էին ծնողք,  
արհեստով դերձակ, ինչպէս կ'երեւայ. նաև պատանին Մանուկ «ուսու բար-  
ւոք զհանդերձարութիւն» և կ'աշխատէր տան մէջ:

Նախահոգ եղան ծնողք, որ իրենց զաւակը կանուխ հասակէն ծանօթա-  
նայ դրապիտութեան. սկսեալ հնգամեայ տարիքէն կ'ուսանէր քահանայի մը  
առաջնորդութեան տակ (1682—1687):

Երեւցած էին քաղաքին մէջ երկու Շապին-Գարահիսարցի ճգնաւոր եղ-  
բայրներ, Ալեքսիանոս և Յովհաննէս (1646—1685), որոնք նախ Լիմ և ապա  
այլ տեղեր ճգնելէ վերջը հաստատուած էին Սերաստիա, զորոնք տեղւոյն  
առաջնորդն Մեղիսեթ Եպիսկոպոս (հաւանօրէն այս անուամբ երրորդը,  
1666—1680) Եկեղեցւոյ դասը հրաւիրած էր: Անոնց օրինակին հետեւած էին  
երկու համեստ ճգնաւոր քոյրեր, Մանասէ և Մարիամ, որոնք կը ճգնէին  
իրենց տան մէջ, հրահանգուելով վերջին ճգնաւորներէն: Անոնց խոստո-  
վանահայրն էր Յարութիւն քահանայ: Մանուկ, սկսեալ իր տասներորդ տա-  
րիքէն, թոյլտուութեամբ իր ծնողաց, մուտք և էլք ունէր այս բարեպաշտ  
քոյրերու քով. կը սորվէր անոնցմէ բարեպաշտութիւն և կ'ընդունէր հոգեւոր  
խրատներ. իսկ Յարութիւն քահանայէն կը հրահանգուէր Եկեղեցական երգե-  
ցողութեան մէջ:

Այս Յարութիւն քահանայ շատ հաւանօրէն նոյն է Սերաստացի այն հա-  
մանուն քահանայի հետ, որ ժէ. դարու վերջերը կազմած է «Գիրք բժշկական

<sup>1</sup> Մխիթար իր «Չորեք տարեց քաղաքեցեալ» ապին մէջ կը գրէ, թէ եր 27րդ տարիւր  
մտածէ 1703ին, ուստի ծնունդը կ'ենթադրէ 1676ին (տե՛ս վարը Գ. 1, 31): Այսպէս նաև  
1737ին սկիզբը Աստուածաշունչի վերջարանին մէջ կը յայտնէ, թէ «մերձ և՛ այժմ եղբերկ  
Մինաս Վ. Սերաստացի, մխիթար արքայի» «Եղբայր ձեր տիրացու Յովսէփն վաղուց տեղա է:  
1737 կը դէր առ Մխիթար արքայի» «Եղբայր ձեր տիրացու Յովսէփն վաղուց տեղա է:  
Եւ մերձակայ աւուրս եկն ի Սերաստիոյ տիրացու համբարնէն զարբանեալ աջն ձեր» (Տպեան, Մայր  
Գրան, էջ 66). իսկ էջ 60 կը յիշատակուի Հ. Յակոբ Բուզպեանի 2 դեկտ. 1735 թիվէն  
«Մխիթարի մէկ հայրենի զոգարիկ բացատրութիւնը. «Մեր Գերյարդէի արքայ հայրն էր որ  
զես Պէրդատ իրկեց, ասաց թէ Գո կարօտը կամրտաւն և Սակփանէն կ'ուսանէ. ուրեմն դու  
ալ, ո՛վ Սրբուհի, զիմ կարօտս Սիման և Զէլիկայէն անես, զի արդէս դիտես որ Սիման  
քոյր իմ է և հօրքոյր քո, իսկ Զէլիկան դուտքը կորօրս է և քոյր քո»:





լուրէն, թէ փաշան սպանացած է թրքացնել զիրենք: Սուրբարարներու պարագլուխներն էին Չօլախ եւ Աւետիս եպիսկոպոսներն եւ զրսեցի հայ վաճառական մը: Չօլախ եպիսկոպոսը տեսնելով իր կողմին յաջողութիւնը՝ աւելի ահաւոր եղաւ: Քառասներորդաց պահքի վերջերը բեմ ելաւ եւ հրատարակաւ նորոյն զանոնք, որոնք որ եւ է յարարերութեան մէջ կը մտնեն Փռանկներու հետ: Վիլոտ հրատարակական վիճարանութիւն ունեցաւ եպիսկոպոսին հետ: Ճիշդ նոյն օրը քաղաք հասաւ Աւետիք, որ Կարնոյ շրջակայքը դացած էր: Սա աւելի խելք եւ զիտութիւն ունէր քան Չօլախ եւ աւելի բեմասաց էր: „Ces qualitez etoient soutenues par grand feu, et une hardiesse qui en imposoit au peuple: de sort que ses predications intimiderent notablement les esprits, et jetterent le trouble dans la ville plus que jamais“ (p. 225).

Մայիս 1ին հասաւ Կ. Պոլսէն M. de Chateau-Neuf Փրանսական դեսպանէն նամակներու ծրար մը. անոնցմէ մէկն էր հալածանքներու սկիզբը դրուած նամակի մը պատասխանը, երկրորդն փաշային ուղղուած թուղթ մը եւ երրորդը Բ. Դուռէն Փէրման մը: Կը հրամայուէր փաշային որ արդար ըլլայ Փռանկ Հայերու հանդէպ եւ ազատ ելք շնորհէ անոնց, որոնք 3 ամիսէ ի վեր Կարին կը սպասեն Պարսկաստան երթալու համար: Վիլոտ եւ ուրիշ երկու հողի կը ներկայանան Փաշային, որ շնական խորամանկութեամբ կը հարցնէ անոնց, թէ որո՞նց դէմ է իրենց դանդաւոր. անոնք մատնանիչ կ'ընեն Աւետիքն ու Չօլախն եւ զրսեցի հայ վաճառականը: Փաշան իրեն կանչեց դանոնք. նախ Աւետիք ներկայացաւ եւ ապա միւսները: Փաշան հրամայեց, որ բանտարկեն զանոնք: Բայց Հայերու խնդրանքով, որոնք երաշխաւոր ընծայեցին իրենք զիրենք, հրամայեց ազատ արձակել: Ամբողջը կանխամտածուած խաղ էր, իրաց երեւոյթը փրկելու համար: Արդիւնքն այն եղաւ որ յաջորդ օրը, մայիս 2ին խաժամուժ ամբողջ մեծ յարձակում մը գործեց Յիսուսեան Վանատան վրայ, քարկոծեց, փորձեց անդամ խորտակել դուռն եւ արին թափել: Հայերը մեծ տաղնապ անցուցին: Ի վերջոյ հրաման հասաւ փաշայէն, որ Յիսուսեանները զիջերախառն հեռանան քաղաքէն: 12 Յիսուսեաններ 1692, մայիս 2 զիջեր կը մեկնին Երեւան:

Վիլոտ, որ ծանօթ էր Նահապետ կաթողիկոսին, երկիցս տեսակցութիւն կ'ունենայ անոր հետ եւ կը պատմէ Աւետիք եպիսկոպոսի արարքները: Կաթողիկոսը անկարող կը ցուցնէ ինք զինքը այս եպիսկոպոսի հանդէպ, որ բացարձակապէս ինքնազուլուի կը գործէր: Հոն էր Ահարոն եպիսկոպոսը:

1692 ամառ կը զլխատուի Փաշան: Չօլախ եպիսկոպոս կը գիտէ վախուստի. մենք հանդիպեցանք իրեն 1693 տարւոյն Էջմիածին: Աւետիք կը մնայ Կարին: 1692 դեկտ. 19ին Վիլոտ կը վերադառնայ Կարին. հոս, ինչպէս տեսանք, կը տեսակցի Մխիթար սարկաւազի հետ: 1693 փետրուարին կը մեկնի Կ. Պոլիս. կը հասնի ապրիլ 6ին: 1694 մայիս 7ին կը վերադառնայ Կարին. նոյն տարւոյն սեպտ. 13ին կը մեկնի Երեւան. կը վերադառնայ դարձեալ Կարին (4 դեկտ.). հոս աթոռին վրայ կը գտնէ Ահարոն եպիսկոպոսը:

1695 փետրուար 7ին Սուրբան Մուստաֆա Բ. գահ բարձրացաւ. Ֆէյսուլլահ կանչուեցաւ Ազրբայձանուպոլիս: Նոյն տարւոյն մայիս 30ին Փրանսական դեսպանէն նամակ կը հասնի, որ կը պատուիրէր առաքեալներուն քաշուիլ այնպիսի քաղաքներ, ուր Փրանսական հիւպատոսներ կան. որովհետեւ սուլտանէն հրաման ելած է այն Հայերու դէմ, որոնք օտարազգի առաքեալներու

հետ յարարերութիւն կը մշակեն. եւ դարձեալ կ'արգելուի առաքեալներու թուրքիոյ քաղաքներու մէջ գործել: Հրամանը առանց տարակուսի Ֆէյսուլլահի սազրանքով արուած էր:

Վիլոտ 1695 յունիս 1ին կը մեկնի Կարնէն Կ. Պոլիս<sup>3</sup>: Բասենի վանքին մէջ կարգուած էր Մխիթար սարկաւազ լուսարար եւ ուսուցիչ: 1693ին հրաման կը հասնի Մելքիսեթ եպիսկոպոսի, որ նուիրակութեան ելլէ. իրեն հետ կ'աննէ եպիսկոպոսը Մխիթար պատանին, որուն հրաման կու տայ քարոզելու. եւ ան կը քարոզէր, ուր որ կը հասնէին: Մխիթար Բասեն մնաց տարի մը եւ հինգ ամիս. ուստի իբր փետրուար 1693—1694 յունիս: Այս միջոցին Ղազար վարդապետ (եպիսկոպոս), զոր յիշեցինք վերագոյն, կը հասնի Կարին եւ լսելով թէ Մխիթար Բասենի վանքը կը գտնուի, թղթով կը հրաւիրէ զինքը իր մօտ աշակերտելու: Մխիթար կը պատասխանէ շնորհալիր թղթով մը եւ կը յայտնէ իր հրաժարականը: Ղազար եպիսկոպոս այս անդամ անձամբ կը ներկայանայ Վանք համոզելու զՄխիթար. բայց ան չի զիջանի: Կ'ըսուի թէ Ղազար եպիսկոպոս թուրք-պարսկական սահմանի վրայ սահմանապահներու ընդհարումի մը ժամանակ կը վերադառնա Կարնէն Կ. Պոլիս: Այս վարդապետի ինքնութիւնը հնարուի եւ այնպէս կը տարուի Էջմիածին: Այս վարդապետի ինքնութիւնը հնարուի չեղաւ ինձ ստուգել:

Կարին անցած դէպքերը կը հետաքրքրեն Մխիթարը. «եւ առաւել տեղեկանայր զիւրաքանչիւր մասանց կաթողիկէ եկեղեցւոյ»: Կը պատմուի թէ Բասենի վանքին մէջ ձառնութիւն մէջ կարդացած ըլլայ Մխիթար «Պատմութիւն Ս. Ժողովոյն Քաղկեդոնի»: Այսպիսի վերնագրով հատուած մը չէ յայտնուած որ եւ է ձառնութիւն մէջ: Կը համարիմ թէ խօսքը կա՞մ Գերմանոս Կ. Պոլսոյ հայրապետին Հայոց դրած թուղթն ըլլայ եւ կամ Պատմութիւնն Ս. Ժողովոյն Եփեսոսի, գրուած Վրթանէս Քերդողէն (ընծայուած Արրահամ Մամիկոնեան եպիսկոպոսի, նաեւ Փիլոքսենիանոս Մարոկայ եպիսկոպոսի): Երկու գրուածքներս ալ կը գտնուին ձառնութիւններու մէջ:

Մխիթար հրաժեշտ տալով Մելքիսեթի եպիսկոպոսին կը մեկնի Վանքէն վերադառնալու իր ծննդավայրը: Կը հասնի Կարին եւ կ'իջեւանի Պօղոս անուն բարեպաշտ անձի մը տունը, որ նոր գարձած էր Հոռմէն: Սա կը պատմէ իր տպաւորութիւնները Յաւիտենական Քաղաքէն: Ասկէ փափագ կը ծնի Մխիթարի մէջ Հոռմ երթալ: Պօղոս ինքնին գրասէր, բերած էր հետը Կրքեր, անոնց թուին մէջ նաեւ կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցւոյն Հոռմմայ» (հաւանօրէն 1690ի տպագրութիւնը մէկ հատորի մէջ), զորոնք Մխիթար անյազօրէն կը կարդայ:

Կը մեկնի Կարնէն եւ կը հասնի Սերաստիա 1694 յունիսին: Կ'իջեւանի Ս. Նշան վանքը: Նոյն տարւոյն հոն կը հասնի Գրեգոր վարդապետ. իրեն պիտի հանդիպինք 1699ին Կարմիր վանքի մէջ: Ժամանակ մը վերջ Սերաստիա կու դայ նաեւ Յովսէփ անուն վարդապետ մը, որ «փիլիսոփայ» կը համարուէր: Սա կը ջանայ իրեն աշակերտել Մխիթար սարկաւազը. բայց նա կը մերժէ: 1690ին կը յիշուի Յովսէփ վարդապետ մը, որ Էջմիածին Պիտոյից գիրքը կ'օրինակէ (Էջմ. Թ. 1804 = Կար. 1765): Կայ նաեւ համանուն վար-

<sup>3</sup> Voyages d'un missionnaire de la Compagnie de Jésus en Turquie... de 1688 à 1709. Paris 1730, p. 168—322.







աշակերտն Յովհաննէս Սերաստայէն. իսկ հոն աշակերտեցաւ իրեն Յովհաննուն երիտասարդ մը, որ ապա Հ. Մանուէլ կոչուեցաւ: Այցելեց տեղւոյն Յիսուսեան Վանքը, որուն ընդհանուր Մեծաւորն Հ. Յովհաննէս Verzeau ծանօթ էր իրեն Հայկազն: Առաւ իրմէ նոր վկայական մ'ալ, որ 15 յուլիս 1697 թուականը կը կրէր (Sch. 4 [սխալմամբ՝ 1696 տարւած], Ազոնց 121/2, Թորոսեան, 360):

Երբ համոզուեցաւ, թէ Սաշատուր վարդապետէն յոյս չկայ, աւելորդ համարեցաւ աւելի երկար դեգերիլ Կ. Պոլիս: Պէտք էր իրեն ճանապարհածախս. առ այս փուռէ փուռ երթալով հաւաքեց ողորմութիւն: 1697 սեպտեմբերին իրեններու հետ մտաւ նաւ, որ Տրապիզոն կ'երթար: Իր մտադրութիւնն էր իր երկու աշակերտներուն հետ երթալ Օլթիք (այժմեան Օլթի), որ սահմանակից էր Վրաց եւ սահաւաթիւ թուրքեր ունէր իր մէջ. հար հոն իրեն ծանօթ եւ համամիտ քահանայ մ'ալ: Կը յուսար բանալ հոն դարոց, հաւաքել աշակերտներ եւ սյուլէս անոնցմէ գործակիցներ յարուցանել իր մեծ ծրագրին համար: Նաւը այլևորմութեան կը հանգիստի բաց ծովին վրայ: Մխիթար կը ստիպուի ցամաք ելլել եւ նաւակով շարունակել ճանապարհը. դարձեալ այլևորմութիւն. դարձեալ ցամաք կ'ելլէ. ի վերջոյ կը հասնի Սինոպ. եւ որովհետեւ դէպի Տրապիզոն դացող նաւ չի գտներ, կը բռնէ ցամաքի ճանապարհը. 1698 յունուարին կը հասնի Մարզուան. կը քարոզէ հոս «բազմամասնայ աւուրս». կ'անցնի Ամասիա. կը քարոզէ նաեւ հոս. կը շահի տեղւոյն քահանաներէն, յանուանէ տէր Յակոբը: Գարնան իր աշակերտներուն հետ գնաց Եւզոսիա եւ միանալով կարաւանի հասաւ Կարին, ուր իջեւանեցաւ դարձեալ իր բարեկամ Պողոսի տունը: Հոս լսեց թէ Օլթիի քահանան «յանկարգութիւն» փոխուած է. ինչ որ պատճառ եղաւ, որ Մխիթար փոխէ իր ուղեգիծը:

Այդ Օլթիցի քահանայի անունը չէ յիշուած: Ինձ ծանօթ է Մովսէս գրիչ մը, որ 1697ին «ի գեղաքաղաքս Օլթիք» օրինակած է Մաշտոց մը, որ 1869ին կը պահուէր Հնձուց վանքի եկեղեցւոյն մէջ (Պոտուրեան Յիշատակարանք): Զեռագրին վերջը կայ տաղ մը.

«Մեծահառաջ կողկողազին,  
Կարգամ առ քեզ Յիսուս միածին...»

որուն տնադրութիւնը կը կապեն «Մովսէսի երգ»:

Կը պատմեն Մխիթարի, թէ Կարմիր (կամ Հնձուց) վանքի առաջնորդն Մարգարէ կաթողիկէ է: Մխիթար իր աշակերտներէն Յովհաննը կ'ուղարկէ Մուսուրկու վանքը, իսկ ինքը Յովհաննէսին հետ կ'երթայ Կարմիր վանք:

Մարգարէ կաթողիկոս սիրով կ'ասանջականէ իր հիւրերը: Ան ունէր վանքին մէջ երեք արեգայ եւ իր 15 պատանիներ. զորոնք կը յանձնէ Մխիթարի գաստիարակութեան: Երեք արեգաններուն եւ իր աշակերտին կը գաստիարակէր Մխիթար Ալպերաի Աստուածարանութիւնը. իսկ Աստուածաշունչի

եւ կրօնաւորականի կացութեան. ի մէջ Հայոց մինչ տակաւին քսան ամաց էր՝ զանուն զիտոյ ունէր. եւ քարոզէր զուղղափառ հասան ուր եւ հասանէր. եւ մեք աչօք մերովք տեսաք, զի ի Ղալաթիա ի նոյնուժ հասակի ի մէջ հազարաւորաց ժողովրդեան ի յատենի եկեղեցւոյն քարոզ ասէք, առ որ հիանային ամենեքեան որք լսէին. եւ անտի գնաց ի յայլս սմանս քաղաքս, ուր վեց ամիս, ուր չորս ամիս քարոզեաց. եւ բազումք լուսաւորեցան ուղղափառ հաստով» (Schiamenti e Documenti, էջ 68):

ցանկերուն հետեւելով Ս. Գրոց համառօտ մեկնութիւնը: Պատանիներուն կ'ուսուցանէր կարդալ եւ գրել եւ ինչ որ կը պահանջէր անոնց տարիքը: Ազատ պահելուն նուիրուած էր ընթերցումի, եւ կը կազմէր այլեւայլ քաղուածքներ:

Այս տեղ պատահեցաւ իրեն միւսանդամ Գրիգոր վարդապետ Մելքոնեան: Օր մը վէճ կը ծագի իր եւ Մխիթարի մէջ վարդապետական հարցի մը շուրջը. երբ Մխիթար եռանդապին իր տեսութիւնը վկայութիւններով կը պաշտպանէր, Եպիսկոպոսը կը սրամտի յանկարծ եւ կը ցեռէ եղունգներով արեգային երեսը: Մխիթար կը յարգէ լուսթիւնը: Լուսթիւն մը հեղահամբայր, որ կը շահի կաթողիկոսին սիրան ու միտքը. «յայնժամ եւ նա եղեւ ուղղափառ»: Յետ ժամանակի, երբ Գրիգոր կաթողիկոսն Հոռմ կ'երթայ, նուէր կ'ուղարկէ Մխիթարի երեք նկար, Ծնունդ Աստուածածնի, Ս. Անտոն եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, զորոնք նկարած էր Յովհաննէս հայ պատկերահանը (Հմմտ. Թորոսեան, էջ 109):

Կենսագիրը այս Գրիգոր կաթողիկոսը կ'անուանէ Մելքոնեան, առանց թեմը յիշելու: Վենետիկի Մխիթարեանց Խ. Շարակնոցի գրիչն է «Գրիգոր երէց որդի Մելքոնի եւ Նարեկի», գրուած 1661ին «յԱրգրում քաղաքի ի դուռն Մխարան Ս. Աստուածածնի» (Պոտուրեան, Յիշատակարանք): Շատ հաւանորէն սա նոյն է Գրիգոր Մելքոնեան կաթողիկոսի հետ: 1608ին Վենետիկի նորէն սա նոյն է Գրիգոր Մելքոնեան կաթողիկոսի հետ, որուն կը յաջորդէ նոյն Ս. Խաչ եկեղեցւոյ հովիւն էր Գրիգոր Վ. Թոխաթիցի, որուն կը յաջորդէ նոյն տարւոյն Սաշատուր Վ. Էրզրումցի (Տայեան, էջ 5):

Մարգարէ կաթողիկոսն իր անուանի իշխանութիւնը: Վկայականը թար արեգային վարդապետական գաւազանի իշխանութիւնը: Այս տեղ կ'ըսուի «...Վարդան աւանդած է Կենսագիրը ամբողջութեամբ: Այս տեղ կ'ըսուի «...Վարդան վարդապետն Բաղիշեցին եւ նորին աշակերտ եւ Մարգարէ վարդապետ Թէոփուլոսիցի յեպիսկոպոսարանէ հրաշագեղոյ Սրբոյ Աստուածածնին Կարմիր եւ Վրացի վանք կոչեցելոյ. որ եւ գնոյն հրաման եւ զիշխանութիւնն փրկչական Լնձուց վանք կոչեցելոյ. որ եւ գնոյն հրաման եւ զիշխանութիւնն փրկչական ետու աշակերտեցելոյն իմոյ եւ հետեւողի աւետարանի Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, Մխիթարայ Սերաստայեոյն՝ քարոզելոյ եւ ուսուցանելոյ յախանջս հաւատացելոյն Քրիստոսի...: Գրեցաւ ի թուին Հայոց ՌՃԽԸ» (1699):

Յաւ է, որ ամիսն եւ օրը մոռցուած է նշանակել:

Վարդապետական մեծ կնիքն ունի վերաստուութիւնս.

ՅԻ ՔԻ ՄԻՅ ՄԱՐԳԱՐԷ ՎԳՊ. ԹՎԻՆ ՌՃԽԸ.

ՄՐԳՐԷ ՎԳՊ

Վարդարէ վարդապետ, որ աշակերտն եղած է Վարդան Բաղիշեցւոյ, ընկերացած է 1678ին իր ուսուցչին ուրիշ աշակերտակիցներու հետ երբ կ'երթար Սպահան. հոս կը ստանայ Վարդան Leiden ի Or. 5494 ձեռագիրը, եւ կը խնդրէ յիշել «զիսաշատուր վարդապետն Բաղիշեցի եւ զաշակերտան իմ զԱրարահամ վարդապետ եւ զտէր Գրիգոր կրօնաւորն, որ աշխատութեամբ բազմաւ սրբաբերեցաք զսա» (Հանդ. Ամս. 1937, էջ 349): Մարգարէ վարդապետ, որ գաւազանի իշխանութիւնն ստացած էր 1680ին, վկայ կ'ըլլայ նոյն տարւոյն Գրիգոր Բաղիշեցւոյ գաւազանի իշխանութեան

(Էջմ. Թ. 737): 1681ին Մարգարէ կը գտնուէր Ամիգ. Վիեննայի Թ. 263, Թղ. 82ա (Յուլիան, էջ 677) կ'ըսուի. «Ի թուականիս մերոյ ՌձՂ (1691) ամի եկն յԱմիթ Վարդան վարդապետի Բաղիշեցւոյն աշակերտն Մարգարէ վարդապետն եւ ունէր ընդ իւր զայս Իւղօրհնէքս եւ զՀիւանդաց Օծման տեսարս. եւ ես նուաաս Յամթեցի Թուամայ դրիչս տեսի եւ ցանկացայ ի դրել. զոր եւ գրեալ աւարտեցի ի մարտի ամսոյ ԺԲն»:

Կոստանդնուպոլսեցի Յարութիւն արքեպիսկոպոսի վկայութեան մէջ, զոր յիշեցինք վերագոյն, կ'ըսուի, թէ Մխիթար «սպա եհաս յԱրգրում քաղաք, եւ անդ մինչ քսան եւ երեք ամաց էր ծայրագոյն գաւազանաւ վարդապետեցաւ յուճեմնէ հոչակաւոր վարդապետէ Մարգար կոչեցելոյ» (Schiarimenti, 68):

Մարգար եպիսկոպոս միեւնոյն օր վարդապետացուցած էր նաեւ երկու արեղաներ: Ինքը քահանայ ձեռնադրած էր Յովհաննէսը, այս դէպքէն քիչ յառաջ կամ յետոյ:

Առաջին վարդապետական քարոզը խօսեցաւ Մխիթար Կարմիր վանքի մէջ. ապա ելաւ քարոզութեան այլ քաղաքներ եւ գիւղեր:

Երբ վերադարձաւ Կարմիր վանք, ներկայացաւ Մարգար եպիսկոպոսին եւ յայտնեց անոր իբ վաղեմի խորհուրդը. այսինքն բանալ վանքին մէջ Մխարանութիւն մը եւ պատրաստել չըջիկ առաքեալներ. եւ խնդրեց որ ձեռնարկութեան դուրս անցնի նա ինքը: «Բայց նա վասն մարմնական երկիւղի ի բաց եկաց». այս ինքն նկատի առաւ այն հարածանքները, որոնք յարուցուած էին անպաշտպան կաթողիկէներու դէմ Կարին եւ այլուր:

Մխիթար որոշեց այժմ դարձեալ Կ. Պոլիս երթալ: Մուտուրկու վանքէն կանչեց իր մօտ Յովհանն աշակերտը եւ հրամայեց Կ. Պոլիս մեկնել եւ հոն իրեն սարսել: Կարմիր վանքի պատանիներէն մին, զոր ընտրած էր իրեն աշակերտ (այն որ յետոյ կոչուեցաւ Հ. Գարրիէլ Կարնեցի), խրատեց եւ ուղարկեց իր ծնողաց քով, հոն սպասելու իր հրամանին: Նաեւ Ղազար անուն մէկը խնդրած էր հետեւել իրեն իրրեւ սպասաւոր. ընդունեցաւ զանիկա:

Հրաժեշտ տալով Եպիսկոպոսին մեկնեցաւ Կարին եւ բնակեցաւ եկեղեցւոյ սենեակներէն մէկուն մէջ: Չմեռնամուտ էր. 1699, սեպտեմբեր—հոկտեմբեր: Կը քարոզէր համարձակ, ամէն օր, առաւօտ եւ երեկոյ: Ժողովուրդի ստիպմանքի վրայ հոն մնաց մինչեւ 1700 դարուն: Չէր առներ գաւազանապառզ: Իրեն բերուած ուտեստեղէններէն աւելորդը կը բաշխէր աղքատներու: Էր անարձաթասէր: Իր քարոզները ծափահարութիւն կը խլէին նաեւ հակառակորդներէն: Յարութիւն արքեպիսկոպոս կը վկայէր. «Ի նմին քաղաքի (ի Կարին) շուրջ գերկու ամաւ քարոզեաց. եւ ի քարոզելն ի յատենի եկեղեցւոյն աւելի քան զերեքսորդար ժողովուրդ հաւաքէին ի լսել զքարոզն. եւ յայտնապէս զուղղափառ հաւատն պայծառապէս բացայայտէր» (Schi. 68):

Այն ժամանակ Կարնոյ առաջնորդն էր Ահարոն<sup>7</sup> եպիսկոպոս, որուն հետ ծանօթացանք վերագոյն. վերադարձած էր աթոռ 1694ին: Կենսագիրը կը գրէ, թէ սա «հակառակ էր ուղղափառութեան եւ հակառակասէր». կ'երեւայ թէ պարագաները փոխած էին զինքը: Սա օր մը Մխիթար վարդապետը իր քով կը կանչէ. կը սկսի բարկութեամբ եւ սպառնալիքով յանդիմանել զա-

<sup>7</sup> Ազոնց (էջ 137) եպիսկոպոսին անունը չի տար. իսկ Թորոսեան (113) «Աւետիս» կ'անուանէ: Կենսագիրը ա' յայտնէ:

նիկա «յաղարս յայտնապէս քարոզելոյ նորա ի վերայ հաւատոյն». կ'ըսէ. Ի՞նչպէս թոյլ կու տաս քեզի այդպէս համարձակ խօսիլ. չէ՞ս վախնար. դատաւորի՞ կը մատնեմ դքեզ: Մխիթար կը պատասխանէ. Ես պատրաստ եմ տաւորի՞ կը մատնեմ դքեզ: Եպիսկոպոսը զայրազին կը շարունակէ. ամէն բանի ճշմարտութեան համար: Եպիսկոպոսը կը շարունակէ. Մխիթար Եթէ տեղի չաաս, ես զիտեմ ընելիքս. Գուն ի՞նչ կրնաս ընել ինձի: Մխիթար Եթէ տեղի չաաս, ես զիտեմ ընելիքս. եւ ուրախ եմ, որ ոչ Սրբութեանդ եւ հեղօրէն կը պատասխանէ. եւ ոչ ինչ. եւ ուրախ եմ, որ ոչ Սրբութեանդ եւ ոչ ուրիշ մէկուն չեմ կրնար շարիք հասցնել: Ասոր վրայ կը հանդարտի եպիսկոպոսը. եւ խաղաղօրէն կը բաժնուին իրարմէ: Ահարոն եպիսկոպոս կը վախնար խոսովութենէ. աւելին չէր հետաքրքրեր զինքը:

1699, աւղոստոս 22ին Կարին կու գան Cornelius Leau Յիսուսեանն եւ Սաչատուր Վ. Առաքելեան, Առաքելական նուիրակն Ս. Աթոռոյն առ Հայս. Մխիթար վարդապետ կը մատչի անոնց յողջոյն եւ կ'ընդունի վկայական մը երկուքի ստորագրութեամբ (Schiarimenti, էջ 4):

- Նոյնպէս 1700, մարտ 9ին Կարնէն կ'անցնին՝
  - Fr. Cherubinus ab Ascensione Carmel. Excalceat.
  - Fr. Joseph Maria de Perusio Capuccinus Missionarius.
  - P. Guilielmus Weber Societatis Jesu Missionarius Malaban.
  - P. Guilielmus Mayr Societatis Jesu Missionarius Malaban.

Մխիթար կ'ողջունէ անոնց գալուստը եւ կ'առնէ անոնցմէ ալ գեղեցիկ վկայական մը միասնական ստորագրութեամբ (անդ, էջ 4—5): Նա իր հետ առտեսութեամբ համոզուած էր, թէ այս եւ նման վկայականներ ապագային պէտք պիտի ըլլան իրեն հարթելու համար խոչընդոտներ իր ճանապարհին վրայ:

1700, ամառնամուտին ճանապարհ ելաւ Կարնէն իր երեք աշակերտներու հետ դէպի Տրապիզոն եւ խաղաղ նաւարկութեամբ հասաւ Կ. Պոլիս (1700 յուլիս): Իջաւ Ղալաթիա: Պատրիարքն էր Մխիթար Քիւրտիստանցի (1699 յուլիս 23—1700 դեկտ. 4), որուն յաջորդեցին Մելքիսեդեկ Սուպհի (1700, դեկտ. 4—1701, սեպտ. 1), Եփրեմ Ղափանցի (1701, սեպտ. 1—1702), Աւետիք Երզնկացի (1702 փետր.—1703) եւ այլն:

Իր 2օրորդ տարիքին էր Մխիթար. ատոյգ հասակով ինչպէս մէկը երեւելիներէն, բարեձեւ ըստ պատշաճի, իր դիմանկարը եւ կեցուածքը ցոյց չէր տար իր վրայ ահաստութիւն, տէր էր հնչիւն, զօրաւոր ձայնի: Կը քաղաքի Լուսաւորչի եկեղեցւոյն մէջ, կը պատարագէր լատինական եկեղեցւոյ մէջ, հոն կը լսէր խոստովանութիւն եւ կը հաղորդէր:

Մխիթար վարդապետ հետամուտ էր այժմ անաղմուկ իրականացնել այն ծրագիրը, որ 1698ին ի վեր կը զբաղցնէր իր միտքը: Առաջին գործն ըրաւ աճեցնել իր աշակերտներու թիւը: Ան բարձրացաւ ութի: Որպէս զի որ եւ է ուշադրութիւն չհրաւիրէր իր գործունէութեան վրայ, խորհած էր Մխիթար եւ ամփոփել այն տեղ իր աշակերտները իրրեւ աշխատաւորներ: Ան յիրականին պիտի ըլլար վստաստուն, ուր պիտի ուսանէին աշակերտները կրօնաւորութիւն եւ քահանայական վիճակի կարեւոր ուսումները իր առաջնորդութեան տակ: Անհրաժեշտ էր այս զգուշութիւնը ժամանակ մը, երբ նախանձը եւ հակառակասիրութիւնը թոյլ չէին տար կաթողիկէ մտքով որ եւ է ձեռնարկութիւն:









կու տայ նախնեաց գործերէն Ալպերտի Աստուածարանութիւնն եւ Առաքինութեանց եւ Մորութեանց գրքերը, խնամով սրբապարտութեամբ. եւ ապա կը զնէ անոնց առջեւ իր Մեկնութիւններն Առակաց գրքին եւ Մատթէի Աւետարանին: Իմ նպատակս է այստեղ ներկայացնել Մխիթարի հեղինակած, թարգմանած եւ հրատարակած գործերը ամփոփ պատկերի մէջ:

Ա. ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆԲ

Տաղարան: Մխիթար մանկութեան հասակէն զտնուած է ներսէն Ենոքհարայ չափական գրուածքներու, մասնաւորապէս «Յիսուս որդի» հաւաքման ազդեցութեան տակ: Բերանացի ուսած է «Յիսուս Որդի» տաղաչափութիւնը: Փորձած է նաեւ անոր նմանութեամբ յօրինել չափական սուղեր: Ասոնց մէջ ամէնէն ընդարձակն է Երգարանութիւնն Ս. Աստուածածնի: Այս, մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիքներուն յօրինած տաղերէն հաւաքածոյ մը կազմած է Մխիթար իր Տաղարանին մէջ եւ ընծայած է մանուկ եւ պատանի ընթերցողներու իր Բրիտանոնէականին կից, «ի գուարճութիւն մանկանց ուսանողաց զՔրիստոնէական Վարդապետութիւն»: Իսկ կրթութիւն աղօթից (Վենետիկ 1718) գրքին մէջ «եղեալ եղեւ ի սմին, կ'ըսէ, նաեւ Այրբենական Երգարանութիւն, որ առ ամէնօրհնեալ կոյսն Մարիամ. եւ զի մինչ այս Երգարանութիւն ի վաղնջուց ժամանակաց ի տիս մանկութեան շարադրեցեալ էր ի նոյնոյ Մխիթարայ վարդապետէ... յոյժ պատկան համարեցեալ եղեւ, զի այժմ ընդ սմին ի մի տուփ եղեալ տպագրիցի, որպէս զի որք ի ձեռն ջերմեռանդութեան մտածական աղօթից մաքրիցին հոգևով, նաքին առ ի հոգևոր գուարճութիւն ինքեանց շարժիցին ի սուրբ սրտէ զովարանել արժանաւորապէս... զմայրն Աստուծոյ զամէնօրհնեցեալն Մարիամ» (էջ 266):

Տաղարանս առաջին անգամ լոյս տեսաւ 1727ին Աշխարհարար Քրիստոնէական վարդապետութեան կից (էջ 77—132): Բ. եւ Գ. անգամ, աւելի ճոխացած նոյն Քրիստոնէականին 1732ի եւ 1771ի տպագրութեան կից (էջ 1—203), այս վերնագրի տակ. «Երգք եւ տաղք զանազանք ասացեալք ի Մխիթարայ վարդապետէ Սերաստացոյ»: Այս առթիւ կը գրէ Մխիթար. «Եւ զի զայս փոքրիկ գործ մինչ վասն մանկանց փոքրկանց շարադրեցի, կամ եղեւ ինձ, զի առ ի մխիթարութիւն նոցին՝ առագրիցեմ ի վերջն սորին նաեւ զայնս տաղս, զորս ի բազմաց ամաց հետէ, եւ ըստ մեծի մասին ի տիս պատանեկութեան իմոյ շարադրեալ էի, եւ օրինակքն լոցին յայնմանէ ժամանակի ի բազում տեղիս տարածեալք եւս էին: Արդ զիտեմ, զի ի միջոցի այսքանեաց բազմաց ամաց ի ձեռն անհմտից գրչաց՝ զոչ սակաւ սխալանս պարունակեն նոքին, վասն որոյ նաեւ որքան առ այս ետու տպագրել զսոսին, զի այնպիսի սխալանքն բանիցին» (էջ 5, տպ. 1732):

Կան տաղեր ալ, որոնք չեն մտած այս Տաղարանի մէջ եւ կը գտնուին ձեռագիր Տաղարաններու մէջ. եւ ուրիշներ, որոնք այլեւայլ հրատարակութեանց կից լոյս տեսած են:

«Տաղարան Ա.» կ'անուանեմ 1727ի տպագրութիւնը, եւ «Տաղարան Բ.» 1732ի տպագրութիւնը, որուն էջերը կ'արժեն նաեւ Գ. տպագրութեան համար: Մ համառոտագրութեամբ կ'իմանամ Վիեննայի Մխիթ. Մատենագարանի ձեռագիրները: Կը հետեւիմ տաղերու այբուբենական կարգի:

1. ՅԱստուածաբանութիւնն Ալպերտի (10 տուն):  
Ակն լուսոյ արփի պայծառ, աստուածայնոց ուսմանցն ճառ.  
Խոնարհ մտաց, թէ եւ չեն վրտ, լուսաւորման լինի պատճառ...:  
Հրտ. Համառոտութիւն աստուածարանութեան Մեծին Ալպերտի. Վենետիկ 1715, էջ 4:

1ա. Երգ զովասանաց եւ պաղատանաց առ ամենասուրբ Աստուածածինն: Տունք՝ Ա.—Բ.:

Ազաչեմ զքեզ Աստուածածին, որ ես տաճար անեղ Բանին,  
Բարձր եւ պայծառ որպէս զարփին, մաղթեա վասն իմ առ քո Որդին.  
Տէր որորմեա, Տէր սղորմեա, Աստուածածին բարեխօսեա...:  
Ձեռագիրք W. 514, 61ա: 643, 43բ:  
Հրատ. Տաղարան Ա. 101—103: Բ. 53—57:  
Կենսադիրք կը գրէ, թէ «զայնու ժամանակաւ (այսինքն 1694, ի Սեբաստիա, Ս. Նշան) Մխիթար սարկաւազն շարադրեաց զերդն զայն. Ազաչեմք զքեզ Աստուածածին. եւ ի վերջ տանց երեք Տէր որորմեա» (էջ 330):

2. Երգ պաղատանաց առ Բրիտանոն Յիսուս, զի նորոզիցէ զնեզ եւ ի սէր իւր քարշիցէ (16 տուն):

Ազազակեմ առ քեզ Յիսուս, սղորմեա Տէր իմ, սղորմեա,  
Դու ես փրկիչ իմ, դու ես կեանք իմ,  
Դու ես յոյս, դու ես յոյս իմ...:  
Ձեռ. W. 514, 156բ: Հրտ. Տաղարան Ա. 89—90. Բ. 19—22:

3. Երգ զրուստակամ առ սուրբն Ստեփանոս նախապետն (9 տուն):

Ամենից քարոզ, ով սուրբ Մարտիրոս,  
Վկայ ստաջին, ով յաղթող սուրբ Ստեփանոս...:  
Ձեռ. W. 514, 59բ: 577, 53ա: Աճ. Տղ. 13ա: Հրտ. Տաղարան, Ա. 97: Բ. 33—34:

4. Երգ ըստ կերպի աղերսանաց առ ամենօրհնեալ կոյսն, զի ազատիցէ զնեզ ի յօթանց մեղաց գլխաւորաց (9 տուն):

Ամենօրհնեալ կոյս անարատ, մայր եւ ծընող Յիսուսի,  
Դիմեմ առ քեզ սըրտիւ իմով, զի միտն իմ քեւ բուժեցի...:  
Ձեռ. W. 514, 64ա: Հրտ. Տաղ. Ա. 107—108: Բ. 63—64:

5. Երգաբանութիւնն առ ամենօրհնեալ կոյսն Մարիամ: Ամենօրհնեալ սուրբ կոյս զըթա, մտաց կուրիս իմաստ շնորհեա:

Բուսաւ յիս ախտ չար հեղգութեան, ի քեզ զլիմեմ այժմ օրհնութեամբ...:  
Վ. Չայն թիւ ինքեամբ բազմապատկեա,  
Որ ի մասանց իւր բազկանայ.  
Ձեւեալն անդուստ բացորոշեա,  
Իւրով ինքեամբ յոգնապատկեա,  
Ձեռակ յիսնեակս ի բաց ձգեա,  
Որ ինչ մնայ՝ զայնս հաշուեա.  
Յայնմիկ թուով որ Աբամեայ,  
Ձերգս կուսին եղեալ զիտեա:

Այս երկու տուները գետեղած է Մխիթար «Կրթութիւն Աղօթից» գրքին Յիշատակարանին մէջ, էջ 266, դիտողութեամբս: «Նդեալ եղեւ ի սմին նաեւ այբուբենական երգարանութիւն, որ ի վաղնջուց ժամանակաց ի ախ մանկութեան շարագրեցեալ էր ի նոյնոյ Մխիթարայ վարդապետէ, որ ի ներկայիս զայս Կրթութիւն աղօթից շարագրեաց...: Եւ թուականն Հայոց, յորում ժամանակի շարագրեալ եղեւ Երգարանութիւն Կուսին ցուցանի ի հետեւեալ տողս»: Թուականն է  $6 \times 6 (36) \times 36 = 1296 - 150$ , այն է՝  $1146 = 1697$ :

Կենսագիրը կը դրէ թէ այս երգը շարագրեց Մխիթար 1694/5 տարւոյն Աւրաստիա, երբ հիւանդութեամբ կորսնցուցած էր երկու աչքերուն լոյսը: Հաւանօրէն յետոյ զայն միւսանդամ խմբագրած է 1697ին:

Երգարանութիւնս յօրինուած է մէկ 36 երկատու եւ  $35 \times 36$  միատու այբուբենի վրայ, ընդ ամէնը 1332 տող:

Հրտ. Կրթութիւն աղօթից. Վենետիկ 1718, էջ 195—239. Տաղարան Բ. 107—169:

6. Երգ առ ամենատարբ Երրորդութիւնն, ըստ կերպի աղերսանաց հանդերձ ըզմիւ փանաչելոյ եւ սիրելոյ գնա (12 տուն):

Անճառ անհաս ստեղծող գոյութեանց բնաւից,  
Կարողութիւն անհուն Հայրըդ համայնից.  
Շնորհեա ինձ գողորմութիւն մտաց եւ բանից,  
Պարգապէս ճանաչել զարարիչդ էից...:

Ձեռ. Վ. 514, 151ա: Հրտ. Տաղարան Ա. 77—79. Բ. 3—6:

7. Երգ եւ գովեստ ի վերայ սուրբ Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն (11 տուն):

Անճառ անհասին, Որդւոյն միածնին,  
Մաքուր եւ ամբիժ կատարողք բանից նորին.  
Սուրբ հայրըդ Դաւիթ իւզով եղջերին,  
Օծեցար ձեռամբ մաքուր սուրբ մարգարէին...:

Ձեռ. Վ. 160, 161ա: 514, 56ա:

8. Երգ ի վերայ ինն դասուց հրեշտակաց; յօրինեալ ի գերագայծառ հօրէ մերսէ Մխիթարայ աբբայէ (8 տուն):

Անճառ անհասին, Հօրն անեղին,  
Սուրբ սպասաւորք էք անմարմին, այլ եւ ընտրեալ հօտ էք յերկին.  
Մաղթեցէք վասն իմ առ Տէր, սուրբ հրեշտակաց զասք անմարմին...:

Ձեռ. Վ. 160, 87բ: 514, 51բ:

9. Երգ առ նոյն երանուհի Կոյսն, յօրինեալ բանիւք դրուատականօք եւ պէսպէս խնդրուածովք (Ա.—Բ):

Անճառն խորան, Բանին բնակարան,  
Գովեալ Մարիամ սրբուհի, Դու վարդ անթառամ:

Ձեռ. Վ. 514, 62բ: 577, 36ա: Երեւան, 854: Տիւրինդէն, 102:  
Հրտ. Տաղարան, Ա. 103—104: Բ. 57—58:

10. Երգ եւ աղերս առ ամենասրբուհի Կոյսն. զի ազատեցէ զմեզ ի մեղաց եւ ի պէսպէս վնասուց նորին (6 տուն):

Գոչեմ առ քեզ սրբուհի Կոյս, զի դու ես միշտ աներկբայ յոյս.  
Լեր բարեխօս վասն եղկելոյս, եւ մի թողուր զիս խորասոյգ...:  
Ձեռ. Վ. 514, 63ա: Հրտ. Տաղ. Ա. 104—105: Բ. 59—60:

10ա. Գովեստ Դրախտ հոգւոյ գրքին (6 տուն):

Գիրքս սոյս Դրախտ հոգւոյ կոչի,  
Անուշահոտ ծաղկամբ է լի.  
Մտադրարար ընթերցողաց,  
Բուրէ ի քիմս ըզհոտ կենի...:

Հրտ. Գիրք Երանելոյն Ալպերտի որ կոչի Դրախտ հոգւոյ, Վենետիկ 1729, էջ 300:

11. Երգ ի վերայ լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, յօրինեալ ի գերապանձ բարունապետէ Մխիթարայ աբբայէ (15 տուն):

Գովեստուք զարս փառաւորս եւ զնախնիս հոչակաւորս.  
Եւ մանաւանդ զհրաշաւորս ի մէջ բազմաց յոյժ լուսաւորս...:  
Ձեռ. Վ. 160, 145ա: 514, 76բ—77բ:

12. Երգ գովասանաց առ ամենասրբուհի Կոյսն Մարիամ, յօրինեալ ի ձեռն նմանութեանց զանազանից իրաց պատուականաց (6 տուն):

Բնակեցաւ ի քեզ Բանն, եւ ծնաւ ի քէն, եւ ծնաւ ի քէն,  
Դուռն երկնից խորան լուսեղէն (կրկնեալ),  
Ի մարմնի սրբէ հոգեղէն, սրբուհի, սրբուհի.  
Կոյս դու լեր մեզ միշտ ապաւէն...:  
Հրտ. Տաղարան, Ա. 111—112: Բ. 71—73:

13. Երգ ի վերայ վնասուց մեղաց (14 տուն):

Ես հաւատամ յԱստուածորդին, որ մարմնացաւ ի պատճառս իմ.  
Այլ եւ մեռաւ նա ի խաչին, ի բառնալ զչար մեղին.  
Զի մի մնացէ, այն, զի մի մնացէ այն, առաջի աշաց նորին...:  
Հրտ. Տաղարան, Ա. 86—88: Բ. 44—47:

14. Երգ առ ամենասրբուհի Կոյսն, յօրինեալ ըստ կերպի պէսպիսեաց աղերսանաց եւ հայցուածոց (8 տուն):

Երանելի մայր անարատ Մարիամ լոյս, զանձն իմ խաւար պայծառացո՛ւ,  
Ո՛վ սուրբ անբիժ կոյս, ամենօրհնեալ կոյս...:  
Ձեռ. Վ. 514, 63բ: Հրտ. Տաղ. Ա. 106: Բ. 61—62:

15. Երգ գովասանական առ ամենասրբուհի Կոյսն Մարիամ (5 տուն):

Երանուհի Մարիամ կոյս գրուատելի.  
Գեղեցկացան ծնօտք վարուցդ հանգոյն տատրակի.  
Սուրբ կուսական պարկեշտութեամբ պարանոց քո է՛ մանեակ ոսկի...:  
Հրտ. Տաղ. Ա. 109: Բ. 67—68:  
Հանդ. Ամս. 1949, Թ. 4—12:

16. Երգ գովասանաց առ ամենապրուհի Կոյսն Մարիամ (6 տուն):  
*Չարմանայի վերնոց սուրբ Կոյս աննման,  
 Գերազանձ տիրուհի մայր անապական,  
 Մաքրաջան լուսատու միշտ ազդի մարդկան,  
 Կուրացելոյս հոգևով լոյս սուր Մարիամ, Մարիամ, Մարիամ . . . :*  
 Ձեռ. Վ. 577, 29բ: Չմմառ, 389, 34ա (անանուն). Աճ. Տաղ. 64ա:  
 Հրտ. Տաղ. Ա. 110: Բ. 69—70:

17. Երգ գովասանաց առ սուրբ հայրն Անտոնիոս (12 տուն):  
*Ըզբեզ սուրբ հայր Անտոնիէ, բաղձամ գովելի ի սերա սրտէ,  
 Ձի դու փայլիս թէև յերկրէ, որպէս զարփին որ ի յերկնէ:  
 Օգնեա մեզ սուրբ Անտոնիէ, օգնեա մեզ սուրբ Անտոնիէ,  
 Պահեա զմեզ սուրբ Անտոնիէ, ի թշամեաց պատերազմէ . . . :*  
 Ձեռ. Վ. 514, 90ա: Հրտ. Տաղ. Ա. 99—100: Բ. 37—40:  
 Կենսագրին համաձայն Մխիթար Երզն շարագրած է 1717ին:

17ա. Բան յորդորական առ ջերմեռանդ ընթերցողս, առ ի ունիլ գփոյթ գղջման եւ խոստովանութեան (27 տուն, վերջին 22—27 տուներու սողակապ գրերն են. ի Մխիթար վարդապետէ ասացեալ է):  
*Ընկալ ըզգիբբս այս հոգելից եւ լեր սրմին խորհրդակից.  
 Մըտաց բանին լեր մասնակից, որով յաղթող լիցիս ախտից . . . :*  
 Հրտ. Յարացոյց ճշմարտի ապաշխարողի. Վենետիկ 1731, էջ 511—517:  
 17բ. Բան համառօտ առ յորդորումն խոնարհութեան ոտանաւոր չափով (8 տուն):

*Ընկալարուք զգիրս գոյս Խոնարհութեան.  
 Եւ զիք ի միտս ձեր սիրով հնազանդութեան.  
 Միտ զիք գործոց Տեառն Յիսուսի՝ որ է մեր կեան.  
 Որ զինքն արար մեզ օրինակ խոնարհութեան . . . :*  
 Հրտ. Կրթութիւն կատարելութեան (խոնարհութեան). Վենետիկ 1742, էջ 248:

18. Երգ առ սուրբ Կոյսն Մարիամ, առ որ եղև զիմումն ի նաւակածութեան ծովու (21 տուն):  
*Ընտրեալ ի մէջ հողեղինաց, Մայր Միածնի Հօրըն փառաց.  
 Մոլորեցաք ի մէջ ալեաց, միայն յոյս մեր, սրբուհի Կոյս, ի քեզ մընաց . . . :*  
 վ. Յամի փրկչին Տեառն Յիսուսի, հազար եօթն հարիւրերորդի,  
 Նաև երկու յայն աւելի, շնորհիւ սրբոյ անբիծ Կուսին, զերծաք ի նմին:  
 Հրտ. Տաղարան Ա. 113—115: Բ. 73—77:  
 Յօրինուած է 1702ին, երբ Մխիթար կը նաւէր զէպի Չանթա:

19. Երգ եւ գովեստ ի վերայ սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի (10 տուն):  
*Ի Հօրէն լուսոյ զօրացեալք, մորուց նորին էք ձեռնադրեալք,  
 Եւ ի սրբոյ Հոգւոյն օժեալք, Պետրոս եւ Պօղոս առաքեալք . . . :*  
 Ձեռ. Վ. 514, 80ա: 577, 53բ: Հրտ. Տաղ. Ա. 95—96: Բ. 31—32:

19ա. Ոտանաւոր բանք ի գովեստ աստուածաշունչ Սուրբ Գրոց: Երկասոց- ներու սկզբնատառերը կը կապեն՝ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ արքայ հայր կոչեցելոյ ասացեալ է ի գովեստ աստուածաշունչ Սուրբ Գրոց:  
*Իբրև զմատեան իմաստութի լի  
 Ստեղծ Աստուած զաշխարհս այս մի:  
 Մտաց մարդկանց ետ քննելի,  
 Այնու զգոյ իւր ճանաչելի . . . :*  
 Հրտ. Աստուածաշունչ Գիրք. Վենետիկ 1733, էջ 1280:

19բ. Գովեստ Մոլութեանց գրոց: Երկասոցներու սկզբնագիրք կը կապեն. ի Մխիթարէ արքայէ վարդապետէ Սեբաստացոյ ասացեալ է այս բան:  
*Ի սկզբան բանիս լիցի յարդունն անուան Տեառն Յիսուսի,  
 Միշտ որպէս է, եւ եղիցի. փառաւորեալ է, եւ լիցի . . . :*  
 Հրտ. Գիրք Մոլութեանց. Վենետիկ 1720, էջ 486—487:

19գ. Ոտանաւոր առ գովութիւն մատենիս (Գրոց Առաքինութեանց). Սկզբնառաք երկասոցի կը կապեն. ի Մխիթարէ արքայէ վարդապետէ Սեբաստացոյ ասացեալ է այս բան:  
*Ի քեզ զիմեմ Կոյս Մարիամ, սուր ինձ ըզլոյս շնորհաց եւ բան.  
 Մասշիլ ի գով այսմիկ զըզկան, շարժել ի սէր գորդիս մարդկան . . . :*  
 Հրտ. Գիրք առաքինութեանց. Վենետիկ 1721, էջ 695—696:

20. Երգ աղերսանաց առ Յիսուս փրկիչ, զի դարձուցէ զմեզ ի մեղաց առ ինքն (տունք՝ ի Մխիթարէ):  
*Ի քեզ զիմեմ Յիսուս փրկիչ ողորմած, զորումն չար ի յանձնէս իմ հան ի բաց.  
 Ի թշամեաց իմոց է այն սերմանած, դարձո՛ր զիս ի մեղաց իմոց,  
 Տէր զթած, Տէր զթած . . . :*  
 Հրտ. Տաղարան Ա. 91—92: Բ. 22—24:

21. Երգ ի վերայ նախատակութեան սուրբ վկային Քրիստոսի տէր Կովիմ- տաս Բախանայի Կոստանդնուպոլսեցոյ ասացեալ ի բաբունապետէն մերմէ Մխիթարայ արքայէ (տունք՝ ի Մխիթարէ ԱԲԲԱՅԷ ԱՍԱՅՅԱԼ):  
*Ի քեզ զիմեմ Յիսուս Տէր իմ, տալ ինձ ըզլոյս շնորհաց քոյին.  
 Ձի կարացից յարմարել զբան, առ ի գովել քոյդ վըկային.  
 Մաքուր եւ սուրբ մարտիրոսին, սէր Կոմիտաս քահանային  
 Ի Կոստանդնուպոլսէ ծաղեալ արփիատիպ ճոռագայթին . . . :*  
 Ձեռ. Վ. 160, 163ա—165ա:

22. Բանք մաղբողականք ոտանաւոր չափով առ ամենասուրբ Երրորդութիւնն: (Սկզբնագիրք տողից ՀԱՅՐԳ Է ԾՆՕՂՆ ՈՐԴԻՆ ԾՆՅԱԼ, ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ Է ՅԵՐԿՈՒՅԳ ԲԵՆԱԼ):  
*Հա՛յր ամենամեծ, Առ իս ձեր զեղեա, յոյսք իմ ի քեզ են . . . :*  
 նոյն տողք եւ բանք, որք ի նախընթացի ոտանաւորի՝ այլով կարգաւ դասեցեալք (կը կապեն. ԾԱՆՈՅ ԱՆԵՂՍ ԲԱՆԻԻԿ ՕՐՀՆՆԵԼ ԳՈՒ ԲԵՐԿՐԷՑՈՅ ՀՈԳԻՍ ԵՆԴՐԷԼ):  
 Ծնունդ հօր ալթայ օ. Արարիչ եւ կեան, նորոգեա զիս արդ . . . :

Նոյնի բանի, որի ի նախընթաց ուսանաւորս, այլով կարգաւ դասեցեալի:

*Եկ հողի անմահ. էղկերոյս զթա. դու ես լոյս լուսոյ...*

Հրտ. Տաղարան Ա. 122—127: Բ. 91—99:

Էջ 128—130 (100—104). «Ծանուցումն որպիսութեանց երկից նախասացելոց օտանաւորաց»:

23. Երգ եւ գովեստ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Որ կարէ երգիլ եղանակաւ Քաղաքի ոսկեայ տաղին: (Տունի՛ Մխիթար վարդապետ ՊԵՏ):

*Հայաստանեայց հայրապետի, բազմաշարժար նահատակի,  
Մեծահանգէս է օր տօնի պարթեալեան սուրբ Գրիգորի.  
Լուսաւորից քրտնաջան հովուի...*

Ձեռ. 514, 78ր: Աճ. Տաղ. 328ա: Հրտ. Տաղարան, Բ. 27—30:

24. Երգ որով լինի ամբաստանումն գանձնէ (Տունի՛ Մխիթար ՍԱՐԿԱԿԱՆ):

*Մածամորըն չարին եղև հողիս աղտեղի.  
Հեղգութեամբ եւ ծուլութեամբ զնա դարչեցուցի.  
Որկրամուլութեամբ զմարմինս իմ պարարեցի,  
Եղէ ես իբրև անասուն ի վերայ երկրի...*

Հրտ. Տաղարան Ա. 92—94: Բ. 48—51:

24ա. (Յորդորակ մանկանց):

*Մատիւր մանկիկ տիով փոքրիկ,  
Խնդրեա սիրով դու զայս գրգրիկ,  
Ի միտ առ զբանս, որք են յայտիկ,  
Թբատ լեղուաւդ, որ է քաղցրիկ...*

Տողերու սկզբնատառերը կը կաղմեն

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ՈՐ ԲՆԱԽԻՑ ԾԱՌԱՅ:

Հրտ. Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, Վենետիկ 1725, էջ 302:

25. Երգ երգոյն Սողոմոնի, շարադրեալ ի Մխիթարայ Սեբաստացոյ վարդապետէ (5 տուն):

*Մենացեալ այրիմ սիրով, Սէրն իմ, փութով էջ ի բարձանց,  
Զի դայր ի (կարի՞) խանդաղատ եմ, լուր, էջ ի խնկարեր լերանց,  
Շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց, եկ սիրելի իմ,  
Ազանի իմ գեղեցիկ, զի ձմեռն էանց...*

Ձեռ. W. 537, 88ր (Յուցակ, 1008):

26. Յորդորումն փախչելոյ ոգւով չափ յախտէ պատուասիրութեան (16 տուն):

*Մի համարիւր զքեզ արժանի, պատուոյ սիրոյ ըստ ամենայնի.  
Զի մի գուցէ մինչ հանդիպի, այն քեզ լեցի մակարդ չարի...*

Հրտ. Տաղարան Բ. 200—202:

27. Երգ խրատական վան խորշելոյ ի մեղաց, եւ գործելոյ գրարիս եւ զգուշանալոյ ի խաբէութեանց աշխարհիս: (Տունի՛ Մխիթար վարդապետ ՊԵՏ):

*Միտ դիր, եղբայր, բանից իմոց, լեր մըտածող վերջնոց քոյոց.  
Յուսայնութեանց աշխարհայնոց. մի խարիւր ա՛յ եղբայր,  
Միտ դիր սուրբ Գրոց, միտ դիր սուրբ Գրոց, զի նովա է կեանք հողոց...*

Հրտ. Տաղարան Ա. 84—86: Բ. 15—18: Ձեռ. W. 514, 154ր:

28. Երգ առ սուրբ Կոյսն Մարիամ, ըստ կերպի աղերսանաց, զի լուսաւորիցէ գմեզ ի խաւարէ մեղաց եւ մոլութեանց:

*Մոլորեցաւ միտն իմ մեղօք եւ կայ ի մէջ խաւարի.  
Ոչ գիտէ զինքն թէ ուտի եկն, եւ կամ ուր կայ յաշխարհի.  
Ո՛հ նաեւ անգէտ է զինքեկն, ուր ընթանալ զու պարտի.  
Լուսաւորեա զիս Մարիամ, մայր զթութեանց շնորհօք լի...*

Հրտ. Տաղարան Ա. 115—118: Բ. 78—82:

29. Երգ գորովագրական եւ դրուատական, ի դիմաց սրբուհոյ Կուսին Մարիամու՝ առ մանկացեալ աստուածորդին իւր:

*Ննջեա որդեակ քաղցր եւ անուշ,  
Հանդիր քնով եւ ա՛ռ քեզ ու՛՛՛,  
Օր օր օր օր օր, Աստուածորդւոյս իմ օր օր...*

Ձեռ. W. 412, 117ա: 436 ԻԱ. 30ր: 577, 112ր: Աճառեան, Յուց. Թաւրիզի, 62ա: Հրտ. Տաղարան Ա. 119—121: Բ. 85—89: Ա. Մխիթարեան, Տաղեր եւ Խաղեր, 5—6:

30. Տաղ ի վերայ կարգաց առաքելոցն. յօրինեալ ի Մխիթար արքայէ Խորէ մերմէ (6 երկտող):

*Ո՛վ Սուրբ Պետրոս եւ Յովհաննէս, զիս բուժեցէք ի խոցմանէս.  
Մեծդ Յակոբոս եւ Անդրէաս, զարգացուցէք զանձն իմ տըհաս...*

Ձեռ. W. 160, 160ա: 514, 55ր:

31. Երգ եւ աղերսանք առ ամենասրբուհի Կոյսն...

*Չորից տարերց բազադրեցեալ եղէ մարմին.  
Եւ ստեղծողն իմ եզ անդ խնայն զբանական հողի.  
Ո՛հ, կազմեաց զիս տուն ինքեան, բայց ես անհարթ եւ վայրի.  
Տան իմոյ լեր խարիսխ յուսոյ, ով Կոյս սրբուհի...*

Ձեռ. W. 514, 152ա: Հրտ. Տաղարան Ա. 79—83: Բ. 7—14:

Հոս կը բառուի.  
Չորրորդ հասակս երկատարդ յոր սցմուս մտի.  
ՌձՅ՝ և երկու (1703) էր թիւն հայկազնի...

Իէէն մինչև յէրն ձեր անուանի...  
Կ՛երևոյ ասիկ թէ տաղիս գրութեան տարին է 1703, երբ Մխիթար կը գանուէր ճշդ իր 27րդ տարիքին մէջ (1676 + 27 = 1703):

32. Նորին (Մխիթարայ) երգ ի վերայ Հանգանակին սուրբ Առաքելոցն (3 տուն):

*Սուրբըն Պետրոս ասաց զձօրէ. եւ Անդրէաս որ գմրուոյ է.  
Մեծն Յակոբոս զմարդացմանէ, սուրբըն Յովհաննէս զխաչեցմանէ...*

Ձեռ. W. 160, 160ր:



Գ. ՀԵՂԻՆԱՍԻՈՒԹԻՆՆԵՐ

3.1 Խոլուսմն վարուց, պարունակող բաղձաց և զանազանից ջերմեանդականաց աղօթից. Կ. Պոլիս 1705, յունվարի 20: Փոքր 8<sup>o</sup>, էջ 98:

Ա. սպազրութիւնը լյս տեսած է առանց հեղինակի անունին (Ղազիկեան, 1144). բայց Բ. սպազրութեան մէջ կ'ըսուի յայտնապէս «չարագրեցեալ ի Մխիթարայ Արրայէ մեծէ», Վենետիկ 1753. և Գ. սպ. 1810 (համա. Ղազիկեան, 2003):

4. Կրթութիւն աղօթից: Ընդ որում ստանաւոր սրբերենական առ ամենօրհնեալ կոչոյն. շարագրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սերաստացւոյ: Ի խնդրոյ պարուն Մելիքի որդւոյ Սարտարենց պարուն Մարգարի ճուղայեցւոյ: Վենետիկ 1718, ապրիլի 26: 12<sup>o</sup>, էջ 268 (Ղազիկեան, 2003—5): Բ. սպ. 1772, 8<sup>o</sup>, էջ 352:

5. Չայն Քրիստոսի և Կալատացեալ Խոլուսմն. շարագրեցեալ ի Մխիթարայ Արրայէ մեծէ: Վենետիկ 1753, 8<sup>o</sup>, էջ 139: Բ. սպ. անդ 1810:

6. Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան. շարագրեցեալ աշխատութեամբ տեսան Մխիթարայ վարդապետի Սերաստացւոյ: Վենետիկ 1725, էջ 75—312:

7. Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան. շարագրեցեալ աշխարհաբանութեան լեզուաւ, աշխատութեամբ տեսան Մխիթարայ վարդապետի Սերաստացւոյ, արրայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1727, մարտի 1: 12<sup>o</sup>, էջ 132: Բ. սպ. 1732, Գ. սպ. 1771:

8. Քրիստոնէական վարդապետութիւն, որ ի դործ անի ի մեկնելն զպատկերս ի ժամանակի խաղալոյ: Վենետիկ 1737: 8<sup>o</sup>, էջ 100: Բ. սպ. 1775:

9. Լուծումն դժուարիմացից և տարակուսականաց բանից Ալպիարին. շարագրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սերաստացւոյ, ըստ մտաց և ճանապարհի սրբոյն Թօմայի Աբուխնացւոյ և այլոց տիեզերալոյս վարդապետաց: Վենետիկ 1716 փետրվարի 8, էջ 513—680 (ի վերջ Ալպերտի):

10. Մեկնութիւն գրոց ժողովողին, արարեալ և շարագրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ: Ըստ մտաց և խնայմանց մեկնութեանց Հարցն սրբոց և վարդապետաց Եկեղեցւոյ. և մեծամեծաց Մեկնաց աստուածաշունչ սուրբ Գրոց: Այլ և վերահայեցմամբ Երրայականի բուն նշանակութեան, որ Երեւի ի թարգմանութիւնս բաղձաց լեզուաց, այսինքն Լատինացւոց, Յունաց, Ասորւոց, Արարացւոց և Քաղղէացւոց: Վենետիկ 1736: 8<sup>o</sup>, էջ 453:

11. Մեկնութիւն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթոսի. արարեցեալ և շարագրեցեալ ի Մխիթարայ վարդապետէ Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ: Ըստ մտաց և մեկնութեանց Հարցն սրբոց և վարդապետաց կաթողիկէ Եկեղեցւոյ և մեծամեծաց Մեկնաց Սրբոց Գրոց: Վենետիկ 1737, 4<sup>o</sup>, էջ Ժ + 1012:

1 թ. 1—2 տես վերջ՝ Տաղարան և Շարակամբ:

12. Արրայ Մխիթարայ վարդապետի արարեալ պատճառք, որք ասրերին ընդդէմ նոցին, որք ասին թէ ոչ Երբեք պարտ է զնալ ուղղափառաց ի ժամն Հայոց: Չմիւռնիա 1879, 8<sup>o</sup>, էջ 47:

Գրուածքս պահուած է Վիեննայի Մխիթ. Մատենադարանի թ. 263, թղ. 88ա—91բ (Տաշեան, Յուլ., էջ 671) և Չմատի Մատենադարանի թ. 77, թղ. 97ա—107 ձեռագիրներու մէջ: Կենսագիրը կը դրէր յամն 1718. «Ապա թղ. 97ա—107 ձեռագիրներու մէջ: Կենսագիրը կը դրէր յամն 1718. «Ապա կարգինարն Դանարայն... էարկ առաջի Արրահօրն զիւղիւրն վասն զնալոյ Ուղղափառաց յեկեղեցիս Հայոց: Եւ արար ի վերայ խնդրոյն այնորիկ զԳրքոյկ սի և մատոյց սրբոյ ժողովոյն»: Թէ ա՞յս «գրքոյկն» է գրուածքս, չեմ կրնար յիշուի: Պէտք է Վիեննայի օրինակը համեմատել Չմատի ձեռագրին հետ, ճշդելու համար, թէ Երկու օրինակներէս ո՞րն է հարազատագոյնը:

13. Քարոզ շարչարանաց: Երուսաղէմ, թ. 1362 (ԺԸ. դար):

14. Գիրք որ կոչի ձարտասանութիւն, արարեալ Մխիթարայ վարդապետի Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ, յամի 1733 ի Վենետիկ: Տպագրութեամբ լոյս չէ տեսած: Կան ձեռագիրներ. Վիեննա, թ. 720: 748: էջ-միածին թ. 873 (1791): 874 (1764): 875 (1738): 876 (ԺԸ.): 877 (1765): 878 (ԺԸ.): 879 (1760): 880 (ԺԹ): Վատիկան, թ. 16:

15. Այբբեմարան (բուն խորագրին մէջ՝ Գիրք քրիստոնէականի վարդապետութեան. ընդ որում զնի և Այբբեմարան) ի յուսումն մանկանց հաստացելոց, և ամենից որք ունին զպիտոյս: Շարագրեցեալ աշխատասիրութեամբ տեսան Մխիթարայ վ. Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1725, էջ 1—72 (կից Քրիստոնէական, էջ 73—312):

16. Քերականութիւն գրարանի լեզուի հայկական սեռի. շարագրեցեալ աշխատասիրութեամբ տեսան Մխիթարայ վ. Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ: Ի վարժումն նորամտից աշակերտաց Դաստան իւրոյ. և ի յօգուտ այլոց ամենից, որք ունին զիւրաք ի զաւիթս խմատից գրամբ քերականութեան մտանելոյ: Վենետիկ 1730, 8<sup>o</sup>, էջ 504: Բ. սպ. 1770:

17. Դուռն Քերականութեան աշխարհարան լեզուին Հայոց. շարագրեցեալ տաճկականաւ լեզուաւ, առ ի յօգուտ այնց Հայոց, որք գտածկական լեզու միայն զիտեն և փափաքին ուսանիլ զաշխարհարան հայերէնն: Աշխատասիրութեամբ տեսան Մխիթարայ վ. Սերաստացւոյ Արրայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1727, 12<sup>o</sup>, էջ 149:

18. Բառգիրք հայկական լեզուի. բաժանեալ յերկուս հասորս... արարեալ ի Մխիթարայ վ. Սերաստացւոյ արրահայր կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց: Վենետիկ 1749, մայիսի 19: 4<sup>o</sup>, էջ ԻԴ + 1251: Յատաջարանին մէջ կ'ըսուի. «Սկսեալ յամի Տեառն 1727, հասաք ի ստան Ե. և ի զիւղիւն մեր մեծամեծ գրողմանց՝ խափանեցաք մինչև ցամառ 1742. և ապա վերստին բունն հարեալ՝ հասուցաք յաւարտ զործակցութեամբ աշակերտաց մերոց, յամի Տեառն 1745»: Տպագրութեան հասած էր վերջին էջերուն, երբ վախճանեցաւ Մխիթար: Բ. հասորն (էջ 18 + 263 + 371 + 700 = 1422) լոյս տեսաւ 1769:

19. Բանք Քերականութեան պարգեալք ըստ այբուբենից ի Մխիթարէ արքայէ: Ազուզայ, յորմէ ջուրն թորելով եւ ծորելով իջանէ...: Էջմիածին Թ. 873, էջ 247 (1792):

20. Տօմար կարնառօտ. այսինքն՝ համառօտութիւն հնոյ Տօմարին Հոսմայեցոց, որով հասարակարար վարի ազգս Հայոց. շարակարգեցեալ զիւրին սճիւ ի յօդուս պարզամտաց ի Մխիթարայ Վ. Սերաստացոյ արքայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1733, 12<sup>0</sup>, էջ 40: Այլ տպագրութիւնք՝ 1748: 1755: 1771:

21. Յաղագս Մաքէմաթիֆայի, մեծազիր երկսիւն 373 էջ (տես Թորոսեան, 347):

22. Ծաղկաբաղդ:

Կենսագիրը կը գրէ, թէ Մխիթար արեղայ 1698ին, երբ կը դռնուէր Կարմիր Վանքի մէջ, կազմեց «եւ գրիրս հաւաքման Աստուածաշունչ Գրոց եւ Հարց սրբոց եւ գրիրքն Բիւրապար, որ դանուանս եւ զթիւս զլիսոց եւ տանց ցուցանէ» (էջ 338): Թէ ի՞նչ նկարագրով աշխատութիւն էր այս «Բիւրապարը», չգիտեմ: Բայց կը թուի ինձ թէ Գիրքն հաւաքման նոյն է այն Ոսկեփորիկ մատենան հետ, որ պահուած է Վենետիկի Մխիթարեանց Թ. 270 ձեռագրին մէջ, որուն նկարագրութիւնը տուած է մեզի Հ. Բ. Սարգիսեան նոյն Մատենադարանի ձեռագրներու Յուշակին մէջ (Բ., էջ 885—891): Ձեռագրին մէջ Մխիթարի անունը չի մեջուիր, բայց կայ հոն թղ. 206ր անոր կնիքը «Տէր ՄԻՒԹԱՐ ՌՃԽԵ»: Բովանդակութիւնն է.

- 1. Թղ. 1ա—48. «Ծաղկաբաղդ բանից սրբոյն թօմայի» Գեմբացոյ:
- 2. Թղ. 49ա—83ա. «Յովհաննու Աստուածարանի. Աստուած է ծայրագոյն բարի...»: 3. Թղ. 83ա—115բ, 128ա—131ա Ծաղկաբաղդ ի բանից Իմաստասիրաց եւ Ս. Հարց: 4. 159բ—216բ. Ծաղկաբաղդ Հայոց եւ օտար Ս. Հարց եւ վարդապետաց գրուածքներէ Բանին մարմնաւորութեան, Ս. Հոգւոյն բխման, հոգւոյ եւ մարմնոյ ստեղծման, Պետրոսի եւ պապին գլխաւորութեան մասին: 5. 217—378բ ընդարձակ քաղուածքներ Առաքինութեանց եւ Մորութեանց, ինչպէս նաեւ Ալլաբերտի Աստուածարանութեան գրքերէն: 6. Իսկ թղ. 116ա—127բ, 133բ—159ա կը բովանդակեն Մխիթարի չափական յարասութիւնք ն. Ծնորհարոյ «Յիսուս Որդի» գրուածքին:

Յիշենք ի վերջոյ «Առանձին հրահանգ եւ խրատ Քարոզաց մերոց, արարեալ ի բարեյիշատակ Հօրէն մերմէ Մխիթարայ Արքայէ» (Վիեննա. անթուական, փոքրագիր, էջ 32): Եւ «Հատմ ի բանից եւ ի Գրոց Մխիթարայ Արքայի ծառայի Աստուծոյ: Վենետիկ, 1901, էջ 144:

Դ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

23. Գիրք երանելոյն Ալպերտի որ կոչի Դրախտ հոգւոյ: Թարգմանեցեալ ի լատինականէ լեզուէ ի հայ բարբառ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ Վ. Սերաստացոյ արքայ հայր կոչեցելոյ եւ նորին աշակերտի Յօհաննիսի Վ. իւրոյ քաղաքացոյ: Վենետիկ 1729, 8<sup>0</sup>, էջ 300 (Ղազիկ. 69):

24. Թովմայի Ակուինացոյ Աստուածաբանութիւն:

Կենսագիրը կը գրէր յամն 1712 ի Մեթոն, թէ Մխիթար «ամփոփեաց զանձն ի յարտաքին զրազանաց զաւուրս ինչ եւ նորոգ ներկուս կրթութեամբ յանել զհմտութիւնն լատինական բարբառոյն. եւ ապա հրաման ետ Հ. Յովհաննէս վարդապետին (Սերաստացոյ) սկիզբն առնել թարգմանութեան առաջին մասին Աստուածարանութեան սրբոյն Թովմայի: Եւ որչափ ինչ թարգմանէր նա, նոյն ինքն Արքահայրն մեր բազում աշխատութեամբ սրբաթարգմանէր նա, նոյն ինքն Արքահայրն մեր բազում խնայողութեամբ սրբաթարգմանելով նմա զհանգամանս թարգմանութեանն ընթացից քաջալերէր զնա զուցանելով նմա զհանգամանս թարգմանութեանն ընթացից նորա թարգմանութեան եւ ի բազում օրինակս յեղլոյ, ապա սկիզբն առնէր զգասն վարդապետութեան սորա աշակերտաց իւրոց սեղանաւորել: Եւ արար այսպէս մինչեւ եզերեցաւ բոլոր թարգմանութիւնն ի յամս ինչ» (էջ 350): Թարգմանութեան մասին ունի Մխիթար ակնարկութիւն իր Ալլաբերտի Լուծմանց նախարանին մէջ. ուր խօսելով Թովմայի Աստուածարանութեան նկատմամբ կը գրէ. «Թէպէտ նարդենիս այն աստուածարանական մատենան ոչ գտանի ի մէջ գրէ. «Թէպէտ նարդենիս այն աստուածարանական մատենան ոչ գտանի ի մէջ ազգին մերոյ առ ամենեւեան, զի ոչ է տպագրեցեալ. սակայն՝ ոչ եմք յուսահատք յաստուածայնոյ այցելութենէ առ ի ծաղել զայնպիսի մեծագունեղ յայնս եւս՝ յազգս մեր. շարժելով զոմանս ի յաշխատանս՝ եւ զոմանս ի յաստաձեռնութիւն ծախից» (էջ 514—515): Այս թարգմանութենէն ունինք ձեռագիր օրինակներ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանին մէջ:

Ե. ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՔ

25. Գիրք սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Վենետիկ 1732, 8<sup>0</sup>, էջ 552:

Մխիթար հրատարակած է զայս իրրեւ նախընծայ ճաշակ Աստուածաշունչի հրատարակութեան, «ըստ ամենայնի կատարելութեան՝ որ իցէ կարելի, թէ ի կողմանէ թղթոց, ծաղկաբաղդ, եւ պատկերաց, եւ եթէ ի կողմանէ պայծառութեան տպագրութեան, եւ շարից տառից: Եւ սա պարտի ինել մեզ որպէս զօրինակ, զի տպագրոյն (Աստուածաշունչ Գրոց) ըստ ամենայնի նման ամին պայծառապոյն տպիցէ» (էջ 3—5):

26. Աստուածաշունչ Գիրք Հնոց եւ նորոց կտակարանաց...: Վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ աշխատասիրութեամբ եւ ջանիւ տեառն Մխիթարայ Վ. Սերաստացոյ արքայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1733, 4<sup>0</sup>, երկսիւն, պատկերազարդ, էջ Ը + 1280:

27. Գիրք Առակաց Սաղօմօնի որդւոյ Դաւթի. տպագրեցեալ առանձնակի ի փոքրիկ գիրս. ի ժամանակի յորժամ տպագրիւր Աստուածաշունչն. զորոյ զմեծամեծ էջն զկնի տպագրեցման յերկուս անջատեալ, տուաք տպագրել եւ զայս: Ի սփոփանս փափաքողաց գիւրիմաց խրատուց եւ ոսկեղէն բանից զրգոյս այսորիկ: Վենետիկ 1734, մայիսի 20: էջ 94:

28. Համառօտութիւն աստուածաբանութեան երանելոյն մեծին Ալպերտի. թարգմանեցեալ ի վաղնջոց ժամանակաց ի մեծամեծաց վարդապետաց մերոց ի լատին լեզուէ ի հայ բարբառ. եւ նարդենիս ի լոյս ածեցեալ

և սրբազրեցեալ ըստ հնոց օրինակաց և ըստ նախատպին իւրոյ, հողարար-  
ձուլեամբ և աշխատութեամբ Մխիթարայ Վ. Սերաստացւոյ: Վենետիկ  
1715, 8<sup>o</sup>, էջք 512 (Կից՝ Լուծմունք):

«Բան առ ընթերցողս» բաժնին մէջ կ'ըսուի.

«Յեանեալս ամենից բանասիրաց, Մխիթար Վ. Սերաստեան, որ ի տես  
մանկութեան իմոյ սովոր վարժեցայ և խանդակաթ սրտիւ յաւէտ ի սէր սո-  
րին վառեցայ... ստիպեալ ի սիրոյ յանձն առի աշխատիլ առ սրբազրութիւն  
սորին, հանգերձ աշակերտաւ իմով՝ Ովհանիսիւ վարդապետիւ Սերաստենիւ:  
Եւ ընդ երկար ժամանակս աշխատասիրեալ մեր՝ հաղիւ կարացաք ի լոյս  
ածել, մաքրել ի սրտմանց զբշաց, և իստիքսել հանգերձ առողանութեամբ,  
և այլովէ պիտանաւորիւք առ բանն. ըստ որում էին բազմազան հին օրի-  
նակքն, և մանաւանդ նախատիպն» (էջ 2—3):

29. Գիրք Առաքինութեանց... անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ  
բարբառ ի դաւանն Նախջուանու ի վաղնջուց ժամանակաց. իսկ այժմ ի լոյս  
ածեցեալ աշխատասիրութեամբ և սրբազրութեամբ տեառն Մխիթարայ  
Վ. Սերաստացւոյ արբայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1721, 4<sup>o</sup>, էջք 696:  
Բ. տպ. 1772:

Բ. տպագրութեան խորագրին մէջ աւելցուած է. «Հարագրեալ ի Պետ-  
րոսէ արեղայէ Արաղոնացւոյ, որ ի կարգէ Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի:  
Թարգմանեալ ի լատինականէն ի հայ բարբառ ի Յակոբայ ումեմնէ, ի դաւանն  
Նախջուանու, ի թուին Քրիստոսի 1339» և այլն:

30. Գիրք Մոլութեանց... անդրածեցեալ... (տես վերը). Վենետիկ  
1720, 4<sup>o</sup>, էջք 487: Բ. տպ. 1773 (որպէս ի վերոյ):

31. Գիրք որ կոչի Աղբիւր բարի, արտահանեցեալ ի գրեանց Լատինաց-  
ւոց և ի հայկական բարբառ շարագրեցեալ ի Պետրոսէ Վ. Թիֆլիզեցւոյ. և  
ի լոյս ածեցեալ հողարարձութեամբ և սրբազրութեամբ տեառն Մխիթարայ  
Սերաստացւոյ: Վենետիկ 1722, 12<sup>o</sup>, էջք 359 (Ղազիկեան, 107):

32. Յարացոյց եղմարիտ ապաշխարողի... արարեալ յումեմնէ կրօնա-  
ւորէ Աղեքսանդրոս կոչեցելոյ ի կարգէ Յիսուսեան, յիտալական բաձրատոջ:  
Եւ անտի արտահանեալ ի Պետրոսէ Վ. Թիֆլիզեցւոյ, և շարագրութեամբ  
անդրարեւել ի հայ բարբառ յամի Տեառն 1719: Իսկ յամի Տեառն 1731  
սրբագրեալ և յարմարագրեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ Վ.  
Սերաստացւոյ արբահայր կոչեցելոյ: Վենետիկ 1731, 12<sup>o</sup>, էջք 515 (Ղազի-  
կեան, 114—115):


33. Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորականի առաքինութեան.  
շարագրեալ ի Հ. Արիտոնոս քահանայէ Յիսուսեան կարգին. և թարգմանե-  
ցեալ ի հայկական բարբառ ի Պետրոսէ Վ. Թիֆլիզեցւոյ ի վաղնջուց ժամա-  
նակաց. և յանձնարարութեամբ սորին սրբագրեցեալ մեծաւ աշխատութեամբ  
ի Մխիթարայ Վ. Սերաստացւոյ արբայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1741:  
Մասն Բ. (ձառք Խոնարհութեան և Համակերպութեան), անդ, 1742:  
էջք 248 + 220:

34. Գիրք Թօմայի Գեմբացւոյ, Կանոն ունակի կրօնաւորի ի կարգէ  
սրբոյն Օղոստինոսի, Յաղագս Համահետեմանն Քրիստոսի: Թարգմանեցեալ  
ի Յօհաննիսէ Վ. Կոստանդնուպոլսեցւոյ: Եւ վերստին տպագրութեամբ և  
բարեւոք սրբագրութեամբ ի լոյս ածեցեալ աշխատասիրութեամբ և ջանիւ  
Տեառն Մխիթարայ Վ. Սերաստացւոյ արբայ հայր կոչեցելոյ: Վենետիկ 1737,  
էջք 440:

35. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցւոյ:  
Վենետիկ 1742, 12<sup>o</sup>, էջք 391:

36. Սկզբունք և ուսուցմունք Կենի քրիստոնէականի. շարագրեցեալ ի  
վսեմապօռնեղէ Կարտինալէ Յօհաննիսէ Պօնայէ: Եւ թարգմանեցեալ ի լատի-  
նական լեզուէ ի հայկական բարբառ ի Հ. Թէոդորոսէ կրօնաւորէ հրամանա-  
ւոր և սրբագրութեամբ մեծաւորին իւրոյ Մխիթարայ արբային: Վենետիկ 1744,  
12<sup>o</sup>, էջ 358:

37—38. Յիշեցինք վերագոյն թովմաս Գեմբացւոյ, Խոկումն վարաց և  
երգ երգոցի Մեկնութիւն Մխիթարեան հրատարակութիւնները 1700—1701  
Կ. Պոլիս:



Ս. Ղազարի կղզին 1750ին:









տաց յափշտակէ ի զմայլումն: Ոչ միայն իր դարուն, այլ եւ մինչեւ այսօր կը խլեն Մխիթարակերտ կառուցուածքներդ ընդհանուրին հիւսիսները:

4. Հիւսիսային: Թերեւս յանդուզն խորհուրդ էր ՉՈՍԿԵՅ արեղայի մը համար Մխիթարակերտը մը հիմնելու գաղափարը: Բայց կը պահանջէր ժամանակը նման ձեռնարկութիւն մը, վերածնելու համար նոր ժողովուրդ մը: Մխիթար լաւ ուսումնասիրած էր ժամանակի աննպաստ կացութիւնն եւ հայ ժողովուրդի զմեզ պայմանները սահմանէն այն եւ այս մարզերը: Քրիստոնէայ հայ ժողովուրդը ենթարկուած էր ոչ-քրիստոնէայ պետերու բռնատիրութեան: Կեղեքում, հարստահարութիւն ոչ-քրիստոնէայ ժողովուրդներէ անդէն եւ անպաշտպան քրիստոնէայ ժողովուրդներու: Ազատ չէր կաշկանդուած նաեւ Եկեղեցին, որուն առաջնորդները՝ կաթողիկոս, պատրիարք եւ եպիսկոպոս շահերու եւ սուլթաններու ֆէրմաններով կը հաստատուէին եւ դահլիճէց կ'ըլլային: Նոյն խակ աղօթատեղիներ կանգնելու համար անոնց հաճութեան կը կարօտէին: Չունէին քաղաքները Դպրոցներ, մշակոյթի կենդրոններ: Վանական հաստատութիւնները անշուք պայմաններու մէջ: Բայց էին Եկեղեցիները, բայց մերկ հմուտ Եկեղեցականներէ, հոգելից քարոզիչներէ: Անհովիւ կը սուսայէր ժողովուրդը իր ազիտութեան մէջ: Կաթողիկոսարաններ, Պատրիարքարաններ կ'ապրէին աթոռի կոխ, գիտուն եւ սղէտ իրարու ձեռքէ կը յափշտակէին իշխանութիւնը, ոչ թէ Եկեղեցին պայծառացնելու, ժողովուրդի բարոյական եւ նիւթական մշակոյթը անտեսելու, այլ անոր լուծուիլ իրենց փառաշուք եւ շոտայ նիստ ու կաց ապահովելու, ազգային գումարներով եզարբոսներու եւ սարդարներու քսակը հարստացնելու: Որովի՛ր մշակոյթ կարելի էր ծաղկեցնել, եթէ այն գումարները ի նպաստ ժողովուրդին գործածուէին:

Ժամանակակից մեծ հայ մը, Երեմիա Չէլէպի, նկատի առնելով 1660ին ժամանակի հայկական պայմանները կ'ողորար. «Ոչ էր ի ժամանակիս իշխան, մարդարէ եւ առաջնորդ. եւ ժամ էր իշխանի խաւարասիրացն. եւ կարծեօք եւ հաւաստի ստել կամիւ, զի առումն վատարուքեան սոցա բեղմնաւորեալ՝ կործանումն ազգիս երեւեցուցանէ՞»:

Այդ կործանման առջեւ Ազգի գոյութիւնը պահպանելու համար եթէ Կաթողիկոսներու եւ Մելիքներու ձեռնարկութիւնները արտաքին զինուորական ոյժով ազատագրուելու՝ ձախուղեցան, կարելի էր թերեւս յաջողիլ Եկեղեցին յենարան ընտրելով: Պէտք էր Եկեղեցին ի ներքուստ ամրացնել, ժողովուրդը բարոյապէս զինել, անոր հոգեկան եւ մտաւոր կարողութիւնները զարգացնել, յարուցանելով հաւատացեալ, զարգացեալ, առաքինի պաշտօնեաներ, հոգելից եւ կորովաբան քարոզիչներ, քաջ հովիւներ, գիտուն ուսուցիչներ: Ժողովուրդին մշակութապէս զարգացումը անգարգացած գտարազեն ժողովուրդներու մէջ գորաւորապէս ազգակը պիտի ըլլար ինքնապահպանումի:

Եթէ կը պակասէր առ այս ներքին ոյժ, կարելի էր ստանալ արտաքին օգնականութիւն քրիստոնէայ արեւմուտքէն: Այս մասին ոչ միայն չխորհուցեալ, այլ եւ երբ ինքնարեւարար եղան Եկողներ, հարածուեցան: Կակնարկեմ Յակոբ Վիլոտի Կարին բացած Դպրոցն: Կ. Պոլիս այն Հայերը, որոնք յարարե-

2 Հ. Ն. Ակինեան, Երեմիա Չէլէպի Բէօփրէեան, Վիեննա 1933, էջ 230:

րութեան մէջ ապրեցան Ֆրանկներու հետ, ամբաստանուեցան օսմանեան կառավարութեան իրրեւ Ֆրանկ եւ հարածուեցան: Ֆրանսական հիւպատոսարաններն երկրին մէջ փակուեցան, որպէս զի չխանդարեն անոնք Հոյերու խաղաղութիւնը: Գոհ էին Ազգայիները Օսմանեան հովանաւորութեան ամենազգի հարստահարութիւններու, գոհ էին Կ. Պոլիս պատրիարքարանէն ներս եւ դուրս կատարուած արարուածներու ի տես: Իր կարգին գոհ էին նաեւ Թուրքերը ի տես զհաւուրին յաւիտենական Երկպառակութիւններու եւ ուրախ որ կառավարութիւնը սոյսայի պարզ հարկէն զատ ունէր անկէ Եկամուտի ուրիշ աղբիւր ալ:

Սրտցաւութեամբ գիտեց Մխիթար անմխիթար կացութիւնը իւր ազգակիցներու: Տեսաւ եւ ուղեց դարման տանիլ: Բայց ի՞նչ կրնար ընել այդ երեսասարդ արեղան առանձին: Վատնելով իսկ անհուն եռանդը իր յետին կաթիլին մէջ, պիտի չկարենար մեծ արդիւնքի հասնիլ: Պէտք էր հաւաքել իր շուրջը զազափարին նուիրուած կորովի ոյժեր, մարդիկ զանոնք, եւ ձեռնարկութեան տալ տեւականութիւն, սերունդէ սերունդ շարունակութիւն: Այդ զազափարը կրնար իրականացնել Մխիթարութիւնը:

Այս զազափարը ծնաւ իր մէջ հաւանորէն Հալէպ, ուր աւելի քան 3 ամիս յարարութեան մէջ ապրեցաւ Յիսուսեանց հետ: Հետաքրքիր պատանին հաւաքած էր անշուշտ տեղեկութիւններ այդ Ընկերութեան կազմակերպութեան եւ գործունէութեան մասին: Չայս ենթադրել կու տայ իր Մխիթարութեան համար ընտրած յատակաղիծը, որ շատ նմանութիւններ ցոյց կու տայ այդ Ընկերութեան հիմնական կանոններու: Այս ինքն.

1. Երեք կրօնաւորական ուխտեր՝ Հնագանդութիւն Առաջնորդին, Աղբա-տութիւն եւ Ողջախոհութիւն:
2. Կրօնաւորական հոգի:
3. Բարձր կրթութիւն փիլիսոփայական-աստուածաբանական եւ գիտական ճիւղերու մէջ:
4. Պարապիլ քարոզութեամբ, ուսուցչութեամբ, գիտութեամբ եւ մայրենի գրականութեամբ:
5. Սքեմ համաձայն հայ վանականներու:
6. Ժամերգութիւն եւ Պատարագ ըստ արարողութեան եւ ծիսի Հայոց Եկեղեցւոյն:
7. Նպատակ հայ ժողովուրդի հոգեւոր եւ մտաւոր մշակում:
8. Հեռու քաղաքական եւ քաղաքային գործառնութենէ եւ կուսակցութիւններէ:

Ի սկզբան ընտրած էր Մխիթար հետեւել Ս. Անտոն անապատականի անդիր Կանոններու. բայց սպա առաւ Ս. Բենեդիկտոսի կանոնները, որոնք Ներսէս Լամբրոնացւոյ թարգմանութեամբ ծանօթացած էին Հայոց:

Մխիթար իր զազափարը յայտնեց Սաշատուր Վ. Կարնեցւոյ, որ Ուրբանեան Դպրոցէն ելած, անուանի էր գիտութեամբ եւ առաքելական հոգեով: Չարմանք պատճառեց անշուշտ երիտասարդ արեղայի այս յանդուզն մտածութիւնը: Համարեցաւ զայն անիրականալի, որովհետեւ նման ձեռնարկութիւն մը կը պահանջէր մեծ գումար, գոնէ 500 քսակ: Յանձն չ'առաւ Սաշատուր գլուխ անցնիլ այս գործին: Նոյնպէս հրաժարեցաւ Մարգարէ եպիս-





ճառներ կազմուէին: Բարձր մշակոյթի ճառագայթած լոյսը խաւարին վարժած աչքերուն մնասակար միոյն կրնար ըլլալ:

Մխիթար, այդ խաւարի մէջ նստած ժողովուրդի ծոցէն ինքնուսուծեամբ դէպի լոյս մագլցած, եւ ստաշին անգամ ոտքը եւրոպական հողը շօշափած, չունէր իր ձեռքին դիւթական գաւազանը, մէկ շարժումով արեւմտեան մշակոյթը անապատ Հայաստան փոխադրելու եւ զայն բարեգարգելու: Նախ պէտք էր առ այդ հողը պատրաստել, գրագէտ գործել ժողովուրդը Այրբենարանով, քրիստոնէայ հաւատացեալներուն հաւատքի վարդապետութիւնը մերձեցնել, անոր բարոյական բարձրացումին նպաստել, հոգեշահ մատենաներով վերացական ճշմարտութեանց խելամուտ ընել, զանոնք նիւթականէն ուսողական եւ քնազանցական դիտութեանց առաջնորդել, ոչ ստուսմով, այլ քայլ առ քայլ ամենայն համբերութեամբ: Եւ Մխիթար ընտրեց այս ճանապարհը: Այն, որ ընդունակ էր Մատթէի Մեկնութիւնն գրել, Հայկազնեան Լեզուի Քերականութիւնն եւ Բառագիրքը յօրինել, Աստուածաշունչի հրատարակութեան ձեռնարկել եւ Ալպերտի Լուծմունքը կատարել, խոնարհեցաւ Այրբենարանը եւ Քրիստոնէական Վարդապետութիւնը գրել գրարար եւ աշխարհաբար, Այոթազիրք եւ այլ ժողովուրդին մատչելի գրուածքներ շարադրել. վասն զի ժողովուրդը նկատի ունէր, նոր սերունդին գրալարժութիւնն եւ հոգեկան եւ մտաւոր լուսաւորութիւնը, մշակումը:

Միւս կողմէ Մխիթարի քննադատները կ'անտեսեն, որ Մխիթարեան Դպրոցի հիմնադիրը կոչումով Եկեղեցական էր եւ վանական կրօնաւոր. ան, պիտի գործէր իր կոչման ասպարէզի վրայ: Իր միաբանները պիտի ըլլային դիտուն եկեղեցականներ, հետամուտ գիտութեանց, լուսաւորիչ ժողովրդեան, մշակող հայ գրականութեան, բայց այն սահմանին մէջ, որքան թոյլ կու տար իրենց եկեղեցական կոչումը: Աւելին իրենց սահմանէն դուրս էր: Եւ Մխիթար եւ իրեն աշակերտները բարգաւաճեցին իրենց գործունէութիւնը այս սահմանին մէջ որչափ կը ներէին ժամանակի պարագաները եւ Միաբանութեան անտեսութիւնը:

Այն ուշադրաւ է Մխիթարի գրական գործունէութեան մէջ, որ գրեց պարզ ոճով, ժողովուրդին հասկանալի լեզուով — թէեւ գրաբար հայերէնով — հոգեշահ բովանդակութեամբ: Շօշափեց աստուածաբանական հարցեր, սուսցանելու, մեկնելու եւ լուսաւորելու իր ընթերցողները, առանց վիճարական առարկութիւններ ներկայացնելու եւ անոնց ջատագով կանգնելու եւ հակառակ կողման տեսութիւնները հերքելու: Ան հանդէս կու գայ իրրեւ քաղցրուսոյց վարդապետ, բարեմոյն դաստիարակ, որ հետամուտ է իր ունեկնդիրներուն սրտին խօսիլ, կամքը շարժել, կարողութիւնները քաջալերել, յառաջադիմելու ի բարին եւ աստուածամերձ, աստուածամուխ ըլլալու: Իրաւամբ կը գրուատէ Մխիթարի այս ոգին Հ. Անանեան, երբ կը գրէ, թէ Մխիթար ինչպէս իր կեանքին, նոյնպէս իր գրուածքներուն մէջ երեւան կու գայ կրքէ ազատ եւ ճշմարտասիրութեան նախանձախնդիր. «զի ոչ ոք յուզողամտաց յամենայն զիրս նորա կարէ գտանել ինչ, որ ունիցի գնշմարանս մարտութեան կամ գհոտ հպարտութեան կամ նախանձարեկութեան եւ կամ թշնամանասիրութեան. զի գոր ինչ գրէ, գամենայն խօսի ճշմարտութեամբ, երկիւղածութեամբ, խոնարհութեամբ, խոհեմութեամբ եւ սիրով, մինչեւ ճմլէ եւ գսիրտ

թշնամեաց: Վասն որոյ եւ ամենայն մատենաք նորա եւ Ասքանազեան տոհմիս... զմայրաբանք եւ բերկրեցուցիչք. եւ ի նոսա մանաւանդ Գիրք տաղասացութեանն»:

Մխիթար գանազանեց Ազգ եւ Կրօն: Ան սիրեց իր Ազգը, եւ աշխատեցաւ անոր մշակոյթին ի պայծառութիւն: Աղբեցաւ կրօնով, փարած «Մի, սուբբ, կաթողիկէ եւ առաքելական Եկեղեցոյ». եւ եղաւ քարոզիչ կաթողիկէ Եկեղեցոյ ինչպէս վարդապետական, նոյնպէս բարոյական սկզբունքներուն: Իր բռնած ընթացքը գեղեցիկ բացատրած է Աստուածաշունչի հրատարակութեան (1733) վերջաբանին մէջ (էջ 1279), բացատրութիւն մը, որ կը պահէ իր արժէքն ամէն ժամանակի համար:

«Ես ջանալով հետեւիլ հետոյ Առաքելոյն (Պաւղոսի), որքան կարեմ, եւ որչափ կենդանի եմ, ջանամ աշխատիլ վասն հոգեւորի օգտի եւ շահաւետութեան սպգին իմոյ. թէեւ երբեմն վասն ճշմարտութեան հաւատոյ իցեմ յամանց ի նոցանէ խոտեցեալ, եւ կամ միշտ խոտիցիմ: Վասն որոյ ոյք եւ իցեն որք զինէն խորհին, եւ կամ ընդ ընկերս իւրեանց խօսին, գայս եւեթ ծանիցեն. Զի թէպէտ սիրեմ զազգն իմ, եւ զաշխատիլն վասն օգտի նորա, բայց այնու սիրտն իմ ի յուզողախոհէ դաւանութենէ հաւատոյ սրբոյ Եկեղեցոյն Հոսմայ ոչ երբեք մեղկանայ: Եւ հակադարձաբար՝ թէպէտ ըստ ամենայնի ստորարկեալ եմ եւ ստորարկանեմ զիս միշտ ի ներքոյ հնազանդութեան դահին Հոսմայ, ըստ որում եւ Հայրն մեր սուբբն Գրիգորիոս Լուսաւորիչն ինձ օրինակ կայ, բայց այնու սէրն իմ եւ ջան աշխատանացս առ օգուտն Ազգին իմոյ (թէեւ զիս վասն այսպիսոյ հնազանդութեան քամահիցէ) ոչ երբեք թուլանայ: Եւ եթէ նաեւ վասն այսպիսեաց իմոց ասութեանց ի կեանս յայս յամենից մարդկանց, եւ կամ յամանց խոտիլ եւ առ ոչինչ համարիլ ինձ առաջի կայ, գայն եւս յօժարաբար ընդգրկեմ: Թէ իցէ այն ներկայ, եւ թէ ապագայ: Քանզի զոչինչ փոխարէն սիրոյ եւ աշխատանաց իմոց պահանջեմ յազգէն իմմէ, եւ յիւրաքանչիւրոց ընթերցողացդ գայս մատենան. այլ բաղձամ եւ ըղձակերտեմ գայս միայն, զի դուք օգտիցիք, եւ զգեղս փրկարարս հոյուոց ձերոց յայսմանէ սրբոյ մատենէ վերընդունիցիք, եւ ի սէր ընթերցման սորին օր ըստ օրէ բորբոքիցիք. որով զորս պարտիք անել եւ հաւատալ, առ այնս փութասցիք. եւ այնու գիւրկութիւն հոգեոց ձերոց ապահովս արասցիք»: Ստորագրած է.

ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱՅ ԱՆՊԻՏԱՆ  
ՄԽԻԹԱՐ Վ. ՍԵՐԱՍՏԵԱՆ  
ԱՐԲԱՑ ՀԱՅՐ ԿՈՉԵՑԵԱԿ ԱՆԱՐՃԱՆ

6. Լեզուն: Մխիթար ուսած էր գրական հայերէնը, գրաբարը, Ս. Նշանի Դպրոցին մէջ եւ գարգացուցած ընթերցանութեամբ: Նա արդէն պատանեկութեան կը գրէր իր տաղաշարութիւնները գրաբար, քիչ շատ կանոնաւոր, պարզ եւ յիւրահասկանալի: Նա ծանօթացաւ նաեւ Նոր-գրական լեզուին, որ կը կիրարկուէր Ուրբանեան Դպրոցի արտադրած գրականութեան մէջ, որ ձեւուած էր լատիներէնի ազդեցութեան տակ, ինչպէս երբեմն յունարան հայերէնը հելլենական լեզուի նմանողութեամբ: Մխիթար իմացած էր անոր պախարակելի կողմերը եւ ըստ հնարաւորութեան զգուշացած անոր նորա-





տած էին զինքը, անոր ճառագայթած լոյսէն դատելով. եւ այս պատրանք կարելի չէ համարել, վասն զի այդ Արեգակի ճառագայթները պահած են թէ լոյսը եւ թէ ջերմութիւնը մինչեւ մեր օրերը: Խաչատուր Վ. Կարնեցի, որ դարուն համաստեղութեան մէջ լուսարձակ ասող մ'էր, կը գրէր ի մասին այդ ճառագայթալից Միաբին. «պարտական եմ վկայել, թէ... է Արեգակ... զարմանամք թէ շառաւիղ այսորիկ արեգական ոչ է հասեալ առ բարուրդան. ասաքարինք եւս ճանաչեցին (ճաճանչեցի՞ն) զլուսափայլութիւն սորին»: Այսպէս 1718ին (Schi. 25—26): Վկայութիւնս իր արժէքը առաւելագոյն չափով կը պահէ այսօր:

Երեւակայեք վայրկեան մը այդ Արեգակին: Բացակայութիւնը հայ երկնակամարին վրայ եւ պիտի տեսնենք խաւարին թանձրութիւնն, որ տարածուած է հայարնակ վայրերու վրայ, ըլլայ մայրենի աշխարհին եւ ըլլայ սփեռքի մէջ, եւ այդ խաւարի մէջ հայ կեանքը. հայ մշակոյթն առանց Մխիթարեան Գործոցներու, հայ Գործոցներն առանց Մխիթարեան Գասաղիքներու, հայ Գրականութիւնը առանց Մխիթարեան հրատարակութիւններու, հայ լեզուն առանց Մխիթարեան Քերականութիւններու եւ Բառագիրքներու, հայ մտաւորականութիւնն առանց Մխիթարեան հեղինակութիւններու եւ թարգմանութիւններու, Հայոց պատմութիւնը առանց Չամչեաններու եւ Գաթրճեաններու, հայ Աշխարհագրութիւնն առանց Ինճիճեաններու եւ Ալիշաններու, հայ Մատենագրութեան ուսումնասիրութիւնն եւ հայ Մատենագրանները առանց Վենետիկի եւ Վիեննայի, եւ այլն:

Մխիթար եւ Մխիթարեանք կրցան ճառագայթել եւ փարատել այդ խաւարը, վասն զի անդամներ էին Մխարանութեան մը, որուն հիմերը դրուած էին կաթողիկէ վանական սկզբունքներու եւ անկէ բխած կարգապահութեան վրայ, եւրոպական խաղաղ եւ լուսաւոր միջավայրի մէջ: Հայ վանք էր այն, փոքրիկ Հայաստան մը օտարութեան մէջ, որուն բնակիչները մտուած էին ջինջ հայրենասիրութեամբ, երզուեալ զինուորներ հայ Մշակոյթին:

Եւրոպա ունեցած էր եւ ունի իր ծոցը շատ Հայեր, Հայաստան եւ հայարնակ վայրեր ունեցած են, ունին վանական Հաստատութիւններ եւ պարոնցական Հիմնարկութիւններ, նիւթական առատ միջոցներով, բայց ոչ մի տեղ չէ ծաղկած համազոյգ մը Մխիթարակերտ Մխարանութեան եւ արդիւնաւոր եղած հաւասար արդասիքներով եւ 250 տարիներու անընդհատ տեւողութեամբ, վասն զի չեն ունեցած անոնք Մխիթար մը իրենց լուսատու Արեգակ:

Եթէ կան տակաւին «Բարուրդք», կը յանձնարարենք չփակել կամաւազները լոյսին առաջ: Կը հրաւիրենք հայրենասիրաբար բոլոր Հայրենասէրները տօնել ի միասին «Արժանաւորն մեծապէս տօնեալ լինելոյ<sup>8</sup>», այն «խկապէս Մեծ Մարզն, որ ամբողջ դարագլուխ է կազմում մեր մտաւոր զարգացման պատմութեան մէջ<sup>9</sup>», Մխիթար Սեբաստացին:

Հ. Ն. ԱՎԻՆՆԱՆ

<sup>8</sup> Այսպէս կը գրէ Հ. Մ. Անանեան 1750ին:

<sup>9</sup> Լէօ, Հայոց Պատմութիւն, Գ., Երևան 1946, էջ 879—880:

